Ինձ մտում է ընթերցողի հետ կիսել իմ հպարտությունը եւ ուրախությունը, որ ապրեցի հեռավոր ավերում լույս տեսած գրքում տեսնելով իմ գյուղի համայնապատկերը, հայոց խաղողն ու խաչքարը, լույսի եւ հույսի վառվող կանթերը, բանաստեղծի բացված հոգին ու ինքնախոստովանությունը եւ տունդարձ, հավերժի կանաչ ճանապարհ, բեղուն գրիչ մաղթել հեղինակին:

Վաղարշակ ՂՈՐԽՄԱԶՅԱՆ

Աշոտ ՄԻՐԶՈՅԱՆ

«ՕՐԱԿԱԶԵՎ ԶԲՈՍԱՅՈՒ», 1997թ.

Ահա կռիվը մերն է.
հանուն այս քարքարոտ ձորի,
հանուն այս սրընթաց գետի,
հանուն այս ոլոր-մոլոր ճանապարհի...
Եւ նույնիսկ հանուն այս կեղտի ճանապարհամերձ...
Եւ նույնիսկ հանուն մթան տիեզերական...

Մենք մի խումբ տղերք ենք,
մի խումբ կամավոր տղերք.
ու ո՞նց ենք ուրախացել,
ո՞նց ենք հարբել պաղ գիշերվա մեջ...
ախր կռիվը մերն է,
մերն է վայելքը՝ վտանգի ու մահվան:

Եվ գործը տանի,
թե կրկին խաբեն,
ստից ահազանգ լինի այս ամենը.
կզարկե՞մ ինձ քարերիմ
արյանս խելագար խենթությունը
փարատելու համար:

«ԷԼԵԳԻԱՆԵՐ» 1999 ...

Սեւ վարդի սոներ

Տունս՝ դատարկ, դուռս՝ դատարկ, սիրտս՝ դատարկ ու ավեր,
այսպես անհույս, այսքան անլուրջ, այս աստիճան բնավե՞ր...
Տե՛ր, ինձ մեղա, հաչ իմ, մեղա՛, վերջ, շրջվում եմ ես ձեզնից.
հե՛յ, վրեժիս արդար ակունք՝ հին Աստվածներ, արթնացե՛ք:
Մեռյալների ու հուշերի գերեզման է լոկ պատիր.
քաղաքս զուտ չոլ է դարձել՝ անապատվել ամայի,
մի բարեւ էլ չունեմ լուսով և հալ հարցնող մտերիմ,
ու՛ր եմ՝ չկա՛ն ընկեր, ծանոթ, բարեկամ ու... ընտել իմ:
Ձույզ տասնամյակ զուր հուսացիմք՝ դարձի կզան վերջապես,
սրանց, սակայն, խիղճ-մամուսից ասված բանը՝ չէ՛, չկա՛.
մեզ խժռում են, հա՛ խժռում են, մինչև պրծնեն, վերջացնեն:
Տունս՝ դատարկ, դուռս՝ դատարկ, սիրտս՝ դատարկ ու վայրի,
մանկան լացին, ա՛խ, ծիծաղին ծարավ-կարոտ մնացի...
Տե՛ր, ինձ մեղա, հաչ իմ, մեղա՛. – Վրիժառու սու՛ր դարձիր:

* * *

Բա՛րձր սարեր,
օգնե՛ք՝ հաշտվեմ իմ կեսի հետ,
անհնազանդ
ազատասեր այս «Ես»-ի հետ,
զագաթներում ամպեր քշող
ահեղասույլ քամիներից
անգու՛թ կոփված այս եզգիս հետ,
ծեր ծերպերի մացառներում
անդու՛լ պրկված
լեռնագնա այս խկիս հետ
ու ձեր զմրուխտ ծոցվորագույն
գիժ Դեբեդիս մաքրամաքուր
ակունքներում ծլած-առած
ա՛խ, անցողիկ տերևիս հետ:

Բա՛րձր սարեր,
օգնե՛ք՝ հաշտվեմ աշխարհքի հետ
ու ինձ երբեք նվաստ չզգամ
այս անբարո վաճառքի մեջ,
կրկին ձեզնով ես արբենամ
ինչպես մանկուք պարզ օրերում,
վսեմափա՛յլ
ծեր խորհրդով ես լիանամ
ու իմաստ էլ զուր չփնտրեմ
ունայն ու փուլ այս նորերում:

Բա՛րձր սարեր,
ինձ օժտեցե՛ք
ծեր իմաստուն հանդարտությամբ.
օգնե՛ք՝ հաշտվեմ ինքս ինձ հետ,

210 չչարանամ ու չաղճատվեմ
ու տե՛ր կանգնեմ իմ «ես»-երին
և միանամ, միավորվեմ
ու Մե՛կ լինեմ:

Ես ճանապարհորդ, որ ես անցա,
պոետի նման վայելեցի՜.
ցնորքիս բորբոք ջահը վառած
ու ինքնակիզմամբ... ո՛րք քայլեցի:
Արարեցի, ա՛խ, միշտ երկյուղած,
արբեցի միակ խոսքով վսեմ,
և մահը նույնիսկ չնչին թվաց
բանաստեղծմանս մոլուցքի դեմ:
Եվ մնացալը՝ կինն ու գինին
ու ամենն անուշ միատեղած՝
համեմատ չէին այդ տքնանքիս
միածին բառին հստակ պեղած:
Մաքրության նման սարսուռ ապրում
երևի Նոյն է լուկ զգացել,
երբ աղավմին էր ծիլը բերում-
զույգ կապույտներով թևել-անցել:
Եվ եղա թե՛ն ես անընտել՝
վեհասուլաց ու վիհամուրդ,
ցամաք բիբերս մուրում են դեռ
տեսլականում այլ սեր ու կարոտ:
Ինչևէ, հինը չեմ փորփրում.
Իմ ճանապարհի հոծ կամարին
զուցե՛ն չկա՛ր այն օրերում
կանաչ-կարմիրը արևային:
Ով ընկրկել է՝ չեմ մեղադրում
ընկերներիս այն (արու՞ - մարի՜),
Աստծուց ամեն օր զուք եմ խնդրում՝
նրանք ամենն են հիմա... այրի:

«ԹՎՇՅԱ ԱՇՈՒՆ» 2013-2014 թթ.

Անունդ մանանայի քաղցրությամբ
հավվում է քիմքիս:
Գեղեցիկիդ խելքով եմ հմայված,
թե՛ն, ինչ խոսք,
սիրունն ավելի է սիրելի:
Մեր ամեն մի հանդիպմամբ արբած՝
ճախրում եմ պաղ մոյեմբերյան
նրբանցքներից վերև ու անտեսանելի
սավառնող ամպերի ժանյակներում:
Բայց ծածկագրել եմ քեզ
հնարավոր բոլոր գաղտնաբառերով,
որ իմ վաղեմի ախոյան սատանան
քեզ հանկարծ չճանաչի
(ախր հզոր է անիծյալը),
ու այս ամուրջե թեթևասահ ճախրանքս
կրկին չխճվի
ինձ լավ ծանոթ
տառապանքի դառնաղի սարդոստայնում:
Ու... կներե՛ս,
նույնիսկ քեզ չեմ ցույց տալիս
ներսումս կոհակվող
լուսոսագարդ ծաղկած լճակն այս:
Թե՛ն, ինչ խոսք,
եթե ցանկանաս՝
կարող ես դեպի այն տանող
թաց կածանը կռահել
տանուկ աչքերիս մեջ:

Օ՛, նաիրուհի՛ս՝
կծողուն արևածաղկի պես
խոնարհ ու ծանրաբեռն...
Կարծես հովն էր գրկել
մարմինդ սլացիկ
և օրորում էր դողդոջ:
Անապական շունչդ
եղնիկի հեք էր ասես՝
արյամբ հարազատ ու ջերմ
(մի՛թե մտերիմ չենք եղել
մենք դպրոցական նստարանից...),

և քնքշությունը մեջքիդ
ափիս կոշտության մեջ
ելևէվեց որպես անմեկնելի հնչյուն
այգաբացյալ սաղմոսներից:
Դու ես, հասկացա՛,
Դավթի աչքերին հոգնած
Սիրոնի այգիների զմրուխտը պարզել:
Դու ես Ողիսևի համար
վերադարձի ճանապարհի բացել
ծովերի գոռ ալիքների միջով,
և Դու ես՝ քո վեհերոտ նազանքով
մեր Արային Գեղեցկագույնը դարձրել
հին ու նոր բոլոր այրերից
հավլունի արքայապատիվ կարծրությամբ.
— Իմ Նուարդին չեմ դավաճանի:

Քո ջերմ գարունն այս
իմ թավշյա աշունն է.
մայիսյան վարդերիդ խելացնոր բուրմունքը
արևահամն է իմ ոսկեհատ խաղողի,
գինեծոնների տեքը քաղցրափրփուր:
Անծրներիդ մաքրությամբ շնչող
ակնախտիդ համատարած զմրուխտդ
իմ արտերի գլխահակ ցորյանն է
ու բաղձանքից շիկնած այգիներիս
կարմրաթուշ բարիքն անհատում...
Անապական երկնքումդ լուծվող
թեթևասահ երազանքիդ ծիրը
իմ խելառ ասքի հաստարմատ քիզն է՝
գրանիտ քարափը ճեղքած բռնչեմուս
բնից խոխոջող աղբյուրիս զրնգոցով:
Եվ ծիծեռները քո շինարար
իրենց թևկներին
մի՛ թե իմ աշմանային մշուշներից
իրկնային մամռահոտ հեքիաթներ չեն բերել
զարմանային զվարթ երկիրը քո,
որ Դարության հրաշքը կերտեն
այգաբացներիդ թաց սարսուռներում...

Խոսի՛ր, մի՛ լռիր,
խոսի՛ր, որ թռչուններ դարձած
բանաստեղծություններիս չուն
չմոլորվի գիշերվա մթին,
օրը ցերեկով... մանկամտաբար
հանկարծ հմայված
այլ հորիզոնների դյուբանքներով շքեղ
ու անվերապահ միշտ վերադառնա
ծաղկուն օազիսներիդ լճակները անըջածին:

Խոսի՛ր, մի՛ լռիր,
խոսի՛ր, որ աչքերս բացվեն.
կանա-ակամա, ուզես թե՛ չուզես՝
դու՛ ես իմ ցայերի լույսը հանապազ,
իմ սրտին ցայվող շաղկե ես բերկրանքի...
փողոցների փողոց շնչահեղձված
ռունգերս շոյող՝
սարերից սահած շնկշկական բույրն ես
ու գիտե՛ս՝ նույնիսկ
առածիգ ողն ես չընկճվող կամքիս:

Խոսի՛ր, մի՛ լռիր,
խոսի՛ր, որ այլևս լինեմ
մունետիկը քո բոսոր սրտի,
թարգմանը դառնամ քո մտքերի
և արծազանքը քո երազների,
քո արյան տաք խանդաղատանքը լինեմ
ու թանձր կենսախյուրը քո ավիշի:

«ԶՐԿԻՋՎԱԾ ՎԱՐՂԵՐ», 1996 թ.

Խոսումս պատում է դարձել գիշերը՝
աշխույժ աղմուկով մահապարտների,
օբյեկտի տիրոջ կողմից մի շի՛շ էլ ...
— Սրնգահարիդ մի՛ դատապարտիր:

Փորձված տղերքն են ու չե՛ն նահանջել,
վառվում է արդեն անհագ կարմիրը,
քամու շառաչին ձգվու՛մ ենք առաջ...
— Անդարծ ցնդել է ցնորքն անմարմին:

Սրտիս է հասել արդեն հարամին,
խավարին չանասա, չեմ կորի անհետ,
Վառվում է արդեն դաժան կարմիրը...
— Զանգահարիդ տու՛ր հույսի արահետ:

Ինձ երազված հերոսները անիրական
ցնորամիտ գրքերի մեջ են սոսկ եղել,
և այս կյանքում նրանց նման ե՛ս էլ չկամ՝
շարքերի մեջ այս մեղսածին ու հողեղեն:
Ու թե բան է՝ դյուբված կյանքի պերճանքներով
անիրական իմ այս գոյից ցած եմ սահել,
ու փորձել եմ ոմանց նման ապրել օրով,
ոմանց նման և՛ պայքարել, և՛ վայելել,
ապա ինչ-որ աներևույթ հսկա մի ուժ
ինձ իմ փորքի պահանջներով՝ դուրս է վանել
կրկին դեպի այնկողմնային ափը մուժի
կրկին դեպի գոյությունն իմ թույլ ու անել:
...Արդ՝ քանի՞ տը իմ վրայով անցան թեթև,
տորովեցի քանի՞ անգույն ոտքերի տակ,
ու երբ հիմա ինձ եմ նայում, թվում է, թե
շնչավո՛ր չեմ ցավամրմուռ, այլ մունջ դիակ:
Եվ այդքանից՝ այս դառնեցիք հետո անհուշ,
դեռ ո՛խ չունեմ, մարդուն հատուկ քենը չկա
ու մոլորված կասկածում եմ՝ թե՛ անմռունչ
լուկ Իմաստ եմ անիրական ու հա՛ Չկամ...

17.18.2002 թ., Վանաձոր

Աստծո ամեն օրը՝ ճամփաբաժան.
մարդ հոգնել է արդեն այս շփոթից,
մեր մարդեղեն կերպից այսքան էժան.
խեղճությունից շիկնող մեր ամոթից:
Ու գնում ենք որքան, դոփում առաջ,
ավելի ենք շաղվում, մաղվում-դաղվում.
— Պատանության պայծառ բիբերիս մեջ
Մի՛թե այս պատկերն էր աղավաղում:
Մի՛թե այս երկիրն էր ցնորքագրած,
ուր որդերի պես հար չարածհի
զալարվում ենք հույսով՝ հին աղբի մեջ,
որ Տիեզերքն — ինքը մեր դեմ կաճի:

18.10.2002 թ., Վանաձոր

Մենությունս երբեք ինձ չեղավ
ոչ արևոտ օրով, ոչ ամպամած,
օտար և կեղծ մարդիկ այն կիսեցին
անիրավունք մտան երկիրս բաց:
Ոչ բարեկամ-ծանոթ, ոչ մտերիմ,
ոչ հարազատ արյամբ, ոչ սեր քնքուշ
իմ տաճարով չանցան հուշիկ ու հեգ,
ավելցականները թողին այն ժպետ հուշի:
Ովք չսակվեր թողնա իմ ծանր հոտից,
որ նրանցից կաթած թույնն էր ծորում,
ախր քանի՜ բուժեմ խփված հոգիս,
քանի անգամ փակվեմ ես խոր ծորում:
Կամ գազազած նախրի քառատրոփից՝
էժանգահին ինչքի հետունն ընկած,
ես քանի՛ս փախչեմ լեռները ցուրտ,
քարափներում սառչեմ ահաբեկված:
Որ չաղծվի հանկարծ նրանց շնչից
մութ դարերի միջով մեզ ժառանգված
մեր կեցության իմաստն ստեղծագործ,
մեր գոյության ձևը հաղթանակած:
Որ անպատիվ ու հեգ, լուռ չկանգնեմ
խաչյալների առջև բոլոր նախկին,
չհաջողվի իմ մոտ՝ էլ չծաղկեմ,
գեթ փոխանցեմ մյուս ժամանակին:
Իսկ պողեղուն համար՝ առատագին,
միշտ աննշան երանգ պակաս մնաց
իմ հայրենի երկրում՝ վտարանդի,
իմ մայրենի լեզվով՝ չթարգմանված:

Աշոտ ՄԻՐՋՈՅԱՆ

Քրիստոնեադավան աշխարհին

(Հայաստանում քրիստոնեության ճանաչման 1700-ամյակի առիթով նվիրում եմ թուրքական յաթաղանի սարսափներն ապրած էրզրումցի հորս հիշատակին)

Իմ նախնյաց օրրան,
Հայոց բնօրրան,
Էրզնի ր Հայաստան...
Դու քրիստոնյա
Հայի օրորան:
Մկիզբդ դարերում՝
Դարերով անցար,
Դու կաս դարերում:
Եվ ինչպես հավերժի
Երթն է հարահոս,
Կապրի ազգն հայոց
Եվ բառն հայախոս:
Իսկ քո արյունոտ,
Հորս արցունքոտ
Հուշերի վկան,
Որին անվանում ենք
Շեղծնի տարի՝
1915 թվական,
Հանց անեծքի
Բառերի շարան,
Մարմին դաջվող
Ամոթի խարան
Կապրի դարերում
Որպես անմեղ ապարտի
Դարերում չլող մեղադրանք.
Աշխարհին այս անարձագանք՝
«Ձայն բարբառո հանապատի»
Բայց չէ՝ որ ազգն իմ
(Որ նման չէր մեղապարտի)՝
Դարաբույր հետնորդը
Հայոս էթնոսի,
Լուսավորիչ ծնող
Օրրանը լույսի,
Առաջին օրինական
Հետնորդն էր Հիսուսի:
Եվ քրիստոնեադավան
Աշխարհի աչքերի առջև
(Կարոտ օգնության հույսի)
Անօրենը խաչում էր՝
Ի հեճուկս Քրիստոսի:
Հեռո՛ւ դուք, մտքե՛ր,
Ո՛ւր եք տանում ինձ,
Հոգիս պղտորում
Նորից ու նորից,
Երբ ոչխարահունչ
«Ագ», «Կարա-կոյունլու»
Ցեղերից սերված,
Յաթաղան կոչված
Մրից անբաժան
Թուրքի մի խուժան
Անհոգ նահատակում էր
Արարող, կերտող
Բարին ծնող հունդ՝
Մի հին ժողովուրդ:
Եվ դարին՝ անարգանք,
Ոճիրն այդ՝ հանցանք,
Որի համար պահանջում ենք
Միայն արդար դատ,
Նորից շղթայել է
Նույն թուրքը ժանտ...
Զինանիշ էլ ընտրել՝
Մաքու ւր, անաղա ըտ,
Նույնիսկ ցերեկների
Պազոտ աչքերի

Հայացքից փախչող.
Մինչդեռ գիշերներին՝
Երկնքին թիկնած,
Կորված մարմինը
Անամոթի պես բաց,
Հանց հարեճների
Տարփանքին սովոր,
Հեշտագին տրվող
Ժպիտով կանչող
Բոգ կիսալուսին ...
Մի կողմից էլ
Կարծես թե փնտրել,
Ճշգրիտ ու ճիշտ,
Թուրքին ներհատուկ,
Զինանիշ են ընտրել:
Կեռված, ոլորուն
Լուսինը թերատ
Ճիշտ ու ճիշտ յաթաղան
Թուրքն է բռնադատ ...
Թո՛ւհ, մարդակե՛րս ճիվադ,
Արարքից գարշում
Մեծ մարդասերի
Տողերն եմ հիշում.
«Այստեղով թուրքն է
Սողացել անցել ...»:
Տեսած ավերի,
Խելացնոր ջարդի
Չափերից ցնցված
Ազնիվ մի ֆրանկ՝
Հյուզուն է լացել:
Ասում են՝ թուրքին
Վաղ էր հասկացել ...
Հեյ, լսո՛ւմ ես ինձ,
Դու, անամոթաբար կեղծող,
Գործած մեղքերիդ
Հետքերը հարթող,
Երբեք չպարտվող,
.....

Դիվանագետ պոռնիկ
Բոսֆորի կիսալուսին,
Ուրիշ ի նչ գրեմ.
– Թու՛հ՝ քո նամուսին ...
Ով քրիստոնյա
Աշխարհ բարեպաշտ,
Երբ իմ ոստանում
Խաղաղ ու հաշտ
Հյուրընկալվելու են
Կրոն ու հավատ
Եվ իբրև առաջնեկ՝
Օրենքում գրված
Թիվ մեկ բարեպաշտ
Հային՝ մեծարանք,
Նրա սուրբ հողում
Հնչյունների ներքո
Սաղմոսերգության
Փառաբանելու ենք
Հավատքն Հիսուսի
Գող ձայնելու եմ
Բարձր ու անհաշտ.
– Ամո՛ թ քեզ, աշխա՛րհ,
Դու՝ քրիստոնեապաշտ
Նան արդարապաշտ
Եվ ուրիշ, ուրիշ
«Պաշտ»-երի շարան ...
Ո՛ւր էիր արդյոք,
Երբ քո մեղավոր,
Անտարբեր, անխոս
Աչքերի առջև
Վայրագ մի էթնոս՝
Թուրքը բարբարոս,
Մարտիրոսում էր
Հնի մի էպոս,
Մի ողջ ժողովուրդ,
Որը դավանում էր

Հիսուս Քրիստոս ...
Եվ այդ ամոթը՝
Ճակատիդ խարան,
Դեռես միում է,
Ինչպես կիսախեղդ,
Լուծումը պոտո,
Մի դատ անավարտ:
Հիշի՛ր, ո՛վ աշխարհ,
Որ ավեր հոգում
Անթեղված վրեժ,
Բոցը՝ վառ ու թեժ
Լեռնացած ցատում,
Հայը լուռ սպասում.
Թուրքին պատասխան
Դատին է սպասում:
Եվ հավատ ունեմ,
Արցախն է վկան,
Կրկին թունդ առած
Կանչը հաղթական:
Կգա, կգա այդ օրը՝
Հայի պատասխան.
Ակն ընդ ական,
Ատաճա ընդ ատաման ...

Չափածո բաց նամակ կամ

խրատ-ուղերձ Իլհամ փաշայի

վայրահաչ բաշիբոզուկներին

(Միտքով նվիրում եմ հայոց Արցախ աշխարհի
գոյամարտերի մասնակից, քաջակորով և
ազատատենչ հայորդիներին)

Համբերատար հայ ենք
Չափից շատ, ավա դ,
Բայց երբ պարանոցին
Պրկված պարանի
Գոյ խեղդող ցավից
Հոգին ձայնեց՝ վա խ,
Պապերս են ասել.
«Քոչո՛ւ առ ու փախ»:
Լսո՛ւմ ես արդյոք,
Չարամի՛տ, խարդա՛խ,
Գեներիդ մեջ
Հենն ակնբախ
Ագերի դաշաղ:
Հե՛յ, դո՛ւք, թափառիկ,
Երկինքը՝ տանիք,
Մահ, ավեր սփռող
Սաղմերից ծնված,
Քոչվոր ցեղի հետ
Մինչ Արցախ հասած,
Ծագում, տոհմաճուռ
Քանիցս փոխած,
Այսօր ազգովին
«Ագերի» օծված
Վայրասուն ցեղեր,
Արցախն հայագուն,
Մաշտոցն, իր լեզուն
Անօրեն գրչով
Մայր գրկից գատված,
Մեր բազկի ուժով
Նորեն հետ բերված
Հայաշունչ օջախն
Անկա խ է, անկա խ:
Հոգուս մեղք չանեմ.
Ղուրան չեմ թերթել,
Ոչ էլ չափածո
Սուրահներ սերտել.
Քիչ ու միչ լսել,
Ականջիս հասել,
Պատմածից գիտեմ,
Որ, այլակրոն,

Դուք չունեք մեռն:
Հարց եմ ուղղում,
Բայց ինչո՛ւ, ինչո՛ւ,
Երբ ունեք կրոն,
Թեկուզ անմեռն,
Պատիվ ու նամուս
Քարոզող հավատ,
Հանց պատվագորկ
Պոռնիկ կամ կավատ
Մոռացել եք
Սրբություն, հավա՛տ,
Պատիվ ու նամուս ...
Եվ Այր կոչվելու
Հույսերն են անհույս:
Բավ է բարբառել,
Մեծախոս ճառել
Եվ խեղդող դառնալ
Արցախցու շնչին:
Այլապես հոգնած,
Ծեծված շան նման
Դու՛նչը վեր ցցած
Ձեր ողբահաչից,
Ականջ զգվեցնող,
Պարծենկոտ, գոռոզ
Մարտակոչ կանչից,
Ի պատասխան
Ձեր վայրահաչին,
Այս անգամ ուժգին,
Թափով մոլեգին
Հպարտ հայորդաց
Բռունցքը կիջնի
Մեր սուրբ օջախից
Գող շան նման
Պատառ թոցնող
Ձեր լալիշ ղնչին:
Հիշե՛ք մեկընդմիշտ
Ճշմարիտը ճիշտ՝
Մեր վանքն Ամարաս
Ձեզ համար՝ անհաս,
Երկիրն իմ Արցախ՝
Ազատ ու անկախ,
Թափառ ցեղերին
Երբե՛ք ու երբե՛ք
Չի դառնա փարախ:

Հերոսները երբե՛ք,

երբե՛ք չեն մեռնում

(Նվիրում եմ իր հայրենի Թալիշ գյուղի
ազատագրման համար կյանքը նվիրաբերած
Աշոտ Ճարարյանին (Արծիվ Աշոտ)

Հերոսները երբե՛ք,
երբե՛ք չեն մեռնում ...
Ապրողի համար՝
մարդ-լեգենդ դառնում,
Թեկուզ բացակա,
թեկուզ հնի հուշ,
Երբեք չխամրող
անցյալի վերհուշ,
Էկրանից, գրքից,
նկար-պատկերից
Նորի՛ց ու նորի՛ց
հարություն առնում,
Սրբացած կյանքի
կենդանն է հառնում:
Հիշե՛նք բոլորին
անուն առ անուն:
Արծիճները երբե՛ք,
երբե՛ք չեն մեռնում,
Անմահ հոգիները
երկնքում են սավառնում:
Փազիկ ԵՐԻՅՅԱՆ
33, ք. Չրազդան

Գործարար. «Առաջին անգամ է, որ հայն արտագաղթում է հայի ձեռքով»

Հարցազրույց շվեյցարահայ գործարար Հակոբ Ավագյանի հետ



Հակոբ Ավագյանին շվեյցարահայ համայնքում գրեթե բոլորն են ճանաչում: Գործարար է՝ գորգերի վաճառքով զբաղվող Tapis d'Orient ընկերության հիմնադիրն ու սեփականատերը: Նաև քաղաքականության մեջ է ակտիվ, Շվեյցարիայի քրիստոնեադեմոկրատական կուսակցության՝ Ժնևի փոխատենապետն է: Հ. Ավագյանի հետ մեր զրույցը պետք է լիներ շվեյցարահայերի մասին, սակայն այնպես ստացվեց, որ ավելի շատ խոսվեց Հայաստանի ու հայաստանցիների խնդիրների մասին:

– Պրն Ավագյան, ասում են, որ Ղուք Շվեյցարիայի հայկական գաղթօջախի ամենակոտիվ մարդկանցից եք: Նաև ասում են, որ Հայաստանից արտագաղթողներին շատ եք օգնում: Ծա՞ր մարդիկ են գալիս Հայաստանից Շվեյցարիա:

– Վերջին շրջանում այդքան շատ չեն գալիս, եկողներն արդեն եկել են: Հիմնականում Գերմանիա են գնում, Բալանիա: Բայց արտագաղթի այդ մեծ ալիքն ինձ իրոք շատ է մտահոգում: Մենք աշխատասեր ժողովուրդ ենք: Եթե մարդիկ աշխատանք ունենան, իրենց երկիրը չեն լքի: Անգամ պատերազմի ժամանակ լույս չկար, գազ չկար, բայց ժողովուրդը երկրից չէր արտագաղթում: Նաև արդարության պակասն է դեր խաղում: Ամեն տարի գորակույթի թիվը նվազում է: Սա է վտանգը, երբ երկրում բանակ գնացողների թիվը նվազում է: Այսքան մտահոգ երբեք չեմ եղել: Ու առավել ցավում եմ, որովհետև պատերազմից մեջ առաջին անգամ է, որ հայն արտագաղթում է հայի ձեռքով: Նման բան երբեք չի եղել:

– Ի՞նչ հարցերով են ձեզ դիմում նոր եկածները, ի՞նչ խնդիրներ ունեն:

– Ես դրա մասին չեմ ուզում խոսել: Ինձ ավելի շատ մտահոգում է հարցի մյուս կողմը՝ ինչպե՞ս անել, որ մարդիկ չարտագաղթեն, մասն Հայաստանում: Չէ՛ որ մենք՝ հայերս, ստեղծող ազգ ենք: Մենք Եղեռնի ժամանակ ոտաբորիկ, քաղցած գաղթել ենք արաբական երկրներ՝ առանց ոչինչ ունենալու, առանց լեզուն իմանալու: Բայց կայացել ենք: Ոչ միայն կայացել ենք, այլև նպաստել ենք, որ այդ երկրները զարգանան, ծաղկեն: Իսկ մեր սեփական երկրի մեջ՝ Հայաստանում, թույլ չեն տալիս դա անել: Ոչ թե չենք կարողանում, այլ թղչյլ չեն տալիս: Ես չեմ ուզում մարդիկ Հայաստանից մեկնեն: Գիտե՞ք՝ քանի անգամ եմ օդանավի տոմս գնել և մարդկանց ետ ճանապարհել Հայաստան:

– Բայց չէ՞ որ, եթե Հայաստանում այդ մարդու համար ավելի լավ լիներ, նա բեր լքի երկիրը:

– Որովհետև բոլորի մոտ տպավորություն է, որ Եվրոպայում շատ լավ է, դրամը թափված է: Գիտեն, թե հենց ինքնաթիռից իջնեն՝ 50 դոլարանոցները թափված են լինելու ոտքերի տակ: Իրենք էլ հավաքելու են: Դա այդպես չէ: Գալիս են, հետո են համոզվում, որ հեշտ չի: Անգամ մենք, որ մի քանի սերունդ այստեղ ենք, ինչ-որ բանի հասել ենք, խնդիրներ ունենք: Բայց մենք այստեղ մեր խնդիրները մի կողմ դրած՝ ուրիշ բաներով ենք մտահոգվում: Շվեյցարացին երեկոյան նստում է ու կնոջ հետ քննադրում՝ ուր գնան հանգստանալու կամ մեքենան փոխեն՝ որից գնեն: Մենք նստում-քննադրում ենք արտագաղթի հարցը, Ցեղասպանության ճանաչման հարցը, սահմանի կրակոցները... Ես Հայաստան շատ եմ այցելում ու լավ

գիտեմ վիճակը: Գյումրեցին աշխատանք չի գտնում, գնում է Երևան: Երևանում էլ աշխատանք չի գտնում, հուսահատվում է և գնում ուրիշ երկիր: Իսկ եթե Գյումրիում գործ ունենար՝ Գյումրին էլ չէր թողնի: Կամ՝ Երևանում շքեղ խանութ կա, հարցնում են՝ ումն է, ասում են՝ այսինչինը: Այն մյուսն ումն է, նորից այդ նույն մարդունը: Այդ մարդը խանութներ ունի, գործարաններ: Ամբողջը մի քանի հոգու ձեռքում է: Նման պայմաններում փոքր ու միջին բիզնեսն ինչպե՞ս զարգանա: Այդ մարդիկ անոթի չեն, անկուշտ են: Դրա համար էլ երկիրը դատարկվում է: Արդեն ժամանակն է գալիս: Ժամանակն է, որ ազատ չլինեն, նրանք, ովքեր այսօր այնպիսի վրա նստած են՝ բավական է ուտել: Թող գործարաններ դնեն, ներդրումներ անեն հայրենիքում:

– Իսկ սիրիահայերը գալի՞ս են Շվեյցարիա:

– Ոչ: Սիրիահայերը Հայաստան են գնում: Որովհետև հայրենասեր են, ուզում են իրենց հայրենիքում ապրել: Ու եթե հավասար պայմաններ լինեն, արդարություն լինի՝ կհիմնավորվեն, օգուտ կտան երկրին: Շատ լավ մասնագետներ են, ու ամենակարևորը՝ շատ ազնիվ են: Ես եթե բիզնես ունենայի Հայաստանում՝ մեծ հաճությամբ հալեպցի հայերին կվերցնեի աշխատանքի: Զգիտեն՝ ինչ է խաբելը: Ոչ թե չեն խաբում, այլ չեն էլ մտածում, որ կարելի է խաբել:

– Պրն Ավագյան, Հայաստանում տնտեսությունը զարգացնելու ու աշխատատեղեր բացելու ամենակարևոր պայմանը ներդրումներն են: Ինչո՞ւ սփյուռքայերը Հայաստանին օգնում են, բայց բիզնես ներդրումներ գրեթե չեն անում:

– Որովհետև բիզնես անելու համար օրենք ու պարկեշտություն պետք է լինի: Եթե ես Հայաստանում բիզնես դնեմ ու խնդիր ունենամ այդ օլիգարխներից մեկի հետ, ինչպե՞ս կարող եմ օրինական ճանապարհով իմ իրավունքները պաշտպանել:

– Որքան գիտեմ, Ղուք Հայաստանում բիզնես եք ունեցել: Ինչո՞ւ չչարուսակեցիք: Ձեր Նշած խնդիրների պատճառով:

– Որովհետև ինձ խաբեցին:

– Իշխանություններ՞րը:

– Ոչ, առանձին մարդիկ: Խաբեցին, հիասթափվեցի և դուրս եկա: Բայց հիմա այսքանից հետո նորից պատրաստվում եմ մի խոշոր գործ ձեռնարկել Հայաստանում: Մոտ ապագայում արաբ գործարարների մի խմբի հետ կայցելեմ հենց այդ հարցերով: Ես շատ հարուստ մարդ չեմ, բայց կապերս շատ են: Եվ այդ կապերն օգտագործելով՝ կփորձեմ ինչ-որ բաներ անել: Հիմա Հովիկ Աբրահամյանի նկատմամբ շատ վստահություն ունեմ: Ճարպիկ մարդ է, պրակտիկ, խելացի մարդ է: Տեսական չէ: Տղան Սարգսյանն ավելի տեսական էր, իսկ Աբրահամյանն ավելի գետնի վրայի մարդ է: Վստահ եմ, որ փոփոխություն կլինի, և ես էլ բոլոր ուժերս կներդնեմ:

– Բայց չէ՞ որ համակարգը նույնն է: Ինչո՞ւ եք այդքան հավատում Հովիկ Աբրահամյանին:

– Ինքը ավելի ուժ ունի, քան Տիգրան Սարգսյանը:

– Իսկ ցանկություն ունի՞ փոխելու ինչ-որ բան:

– Կարծում եմ՝ այո: Նորից եմ կրկնում, ինքը Տիգրան Սարգսյան չէ, ինքն ուժի մի մասն է, իսկ Տիգրան Սարգսյանն առիթայդեր էր: Ես ներքին քաղաքականության մեջ չեմ ուզում խառնվել: Ինձ նման իրավունք չեմ վերապահում, որովհետև ես հայաստանցի չեմ: Դե, ձեր ներքին գործն է: Բայց կողմ եմ, որ ոչ թե իշխանափոխություն լինի, այլ իշխանությունն իր քաղաքականությունը փոխի, մի քիչ կշտանա: Մեզ ցնցումներ պետք չեն, թշնամի մեր դռանն է:

– Շվեյցարիան աշխարհի ֆինանսական կենտրոններից մեկն է, որտեղ աշխարհի մեծահարուստները պահում են իրենց միլիոնները: Ասում են՝ Հայաստանից նույնպես մեծ գումարներ են հոսում դեպի Շվեյցարիա: Ղուք նման տեղեկություններ ունե՞ք: Գիտե՞ք մարդկանց, որ իրենց փողը տեղափոխում են Հայաստանից Շվեյցարիա:

– Նման բան ասելու համար պետք է ձեռքիդ փաստեր ունենաս: Չեմ կարող բամբասանք անել և նման բաներ ասել, եթե վստահ չեմ: Բայց ընդհանուր առմամբ, լսում եմ նման բաների մասին: Մյուս կողմից՝ ավելի լավ է՝ փողերը եվրոպական բանկերում լինեն, քան կազինոներում մսխեն: Գոնե կիմանանք՝ բանկերում հայկական հարստություն է, կուտակված է մի տեղ, և մի օր կարող է

«Քանի հայը կապրի, հայոց «այբ-բեն»-ը չի մեռնի... Քանի հայոց «այբ-բեն»-ը կապրի, հայը չի մեռնի...»

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

Կալուզա քաղաքի «Գալակտիկա» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում գործում է «Ժողովրդական ավանդույթների» մանկական միավորումը, որն իր առջև հայապահպանության, հայոց լեզվի, հայ ազգային ավանդույթների շատ կարևոր խնդիր է դրել: Այս խնդրի իրագործմանը սիրով ընդառաջ եկան կենտրոնի տնօրեն Ալլա Յուրևնա Կոնոնովան և քաղաքի թիվ 15 դպրոցի տնօրեն Տատյանա Նիկոլևանա Դրոզդովան, ասելով որ հայերս էլ (մնացած քաղաքակիրթ ազգերի նման) օտարության մեջ մեր մշակույթը, գիրը, լեզուն, սովորույթները պահպանելու իրավունք ունենք:

Ուրախությամբ, հպարտությամբ են լցվում, երբ խմբակ հաճախող յուրաքանչյուր աշակերտի մեջ տեսնում են այն սերը, որն իրենց ընտանիքներում կա՝ դեպի մայրենին, դեպի Հայաստանը: Այստեղ մեծ է մեր մայրերի, տատիկների դերը, որոնք իրենց զավակների համար մայր-տաճարներ են: «Ժողովրդական ավանդույթների» խմբակի սաներին՝ Մարիետային, Սյուզանային, Արեգին, Մարիային, Տամիլային, Կարինային, Աշոտին, Կարենին, Արամին, Էլիզային, Մելինեին, Սարգիսին, Մարատին ցանկանում են, որ իրենց մայրենի լեզուն պահեն պայծառ ու հասցնեն դարերից դար:



**Տաթևիկ ՆԵՐՍՍՅԱՆ,
հայոց լեզվի ուսուցչուհի**

Դերենիկ Դեմիրճյան

ՀԱՅՈՒ

Արդյոք մի բան հասկանում եք հայից... Որքան անհույս էր թվում իր ապագան, բայց և որքան և հուսացող է նա: Ասենք իր կյանքում երկու բան բնավ չտեսավ. մեկ՝ բախտ, մեկ էլ հուսահատություն: Ինչպես և ճանաչես նրան, ինչպես և չափես... Անցիր նրա երկիրը: Ի՛նչ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գոգտրիկ խաչքարեր: Հավատալ կարելի է, թե ինքն է շինել այդ բոլորը: Խոսակցությունն էս լսում՝ հայհոյանքների կեսը եկեղեցի ու Աստված: Լցրել է իր երկիրը եկեղեցիներով, բայց տարին մեկ անգամ չի մտնում մեջը աղոթելու: Աղոթք էլ չի անում առօրյա կյանքում... Եվ հավատալի բան է, որ իր պատմությունը ամենամեծ կրոնական պատերազմների պատմություն է, և այս չաղոթող ցեղի Նարեկացու շուրթերից թափվող աղոթքի ամենաբարձր թռիչքը առ Աստված... Տանել չի կարողանում ծեռ, ձև, աստիճան, քաղաքավարություն: Ռամիկ է գերազանցապես: Իր Խրիմյան Հայրիկը ամենից շատ կաթողիկոսությունը ատեց: Դիպլոմատիայի մեջ մի բանում է շատ հոգա՞ծու՝ անկեղծ լինել: Այնքան և անկեղծ է և միամիտ, որ կասկածելի, խորամանկի և կեղծավորի տպավորություն է անում: Մինչդեռ

իր հարևանները՝ այս աշխարհի բեմի վրա դեր կատարելով միայն, ցույց են տալիս, թե կացնով հարվածում են դիմացինին, հայը իսկապես կացինն իջեցնում է գլխին: «Ապա ճշմարտությունը», – մտախոզվում է նա:

Դանդաղ է ու խոնարհ իր Մատնեցի Դավթի նման և անսպասելի ըմբոստ, հարվածող նրա պես: Քծնում է, ստրկանում օտարի ոտքի տակ, ինչպես իր Ձենով Օհանը, բայց երբ վրա է հասնում գերագույն վտանգը, հերոսանում է հանկարծ և ծառանում վիշապի նման: Բարի է առհասարակ, շոյիք և կկողոպտվի... Այնտեղ, ուր մի ուրիշ ցեղ ուրիշների միայն սերը կարող է վատակել, հայը գտնում է հնարը ատելություն առաջ բերելու: Տաղանդ է՝ իր դեմ ատելություն ստեղծելու: Ուրիշի հաջողության մեջ նախանձոտ է, ինչպես վարդապետ: Եթե գծովեց մեկի հետ, ոխակալ է, ինչպես ուղտ: Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչև մահ: Սա նրա անհրաժեշտությունն է: Անկարգ է և անիշխանական թե՛ հասարակության, թե՛ պետության և թե՛ գաղափարների մեջ: Իբրև ժողովրդական՝ անմիաբան է, անտանելի, խռովարար... Իր կոնվեր երեք ճակատի վրա

էր միաժամանակ՝ շահի դեմ, սուլթանի դեմ, ցարի դեմ... Թաթարն էր մտոր սպասեց ռուսին, ռուսը եկավ աչքը ելրուպացուն էր, եկավ անգլիացին դարձյալ ռուսին էր սպասում, ռուսն է գալիս չի ընդունում: ՄԻ ԶԵՌՔ ԶԱՆԿՈՒՄԵՆՈՎ ՀԻՄՆՈՒՄ Է ԻՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ՄՅՈՒՄ ԶԵՌՔ ԸՌԳ Է ԱՆՈՒՄ ՀԻՄՔ ՔԱՆԴԵՆՈՒ:

Հայի ամենամեծ առաքինությունն էս ուզում. ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մեջ... Չի ուզում, որ իրան դիպչեն, մոտենան, սիրեն թեկուզ: Նա մեկուսի է, խստակյաց, բարի և ազատասեր:

Երբ նայում են հային, ինձ թվում է, թե նրա վիրավորանքը այն արծվի վիրավորանքն է, որին ցած են բերել բարձր լեռներից: Չի սիրում ոչ ստրկություն, ոչ էրջանկություն, գերադասում է տառապանք և ազատություն: Մաղձոտ է, մեկուսի, բայց չունի մեկուսի ատելություն, որ բարձր լեռներին անծանոթ զգացում է: Գերի արծվի խոր վիշտն է իր սրտի մեջ: Սա Հայկն է, որին գրկել են իր կյանքի միակ պայմանից՝ ազատությունից:

«Ոչինչ չեմ ուզում ձեզնից, – ասում է նա իր նեղիչներին, – ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկությունը, գնացե՛ք, ապրեցե՛ք խաղաղ և երջանիկ: Եթե դուք սիրում եք կյանքը, ես սիրում եմ կյանքից ավելի թանկ բան՝ Ազատությունը...»:

(կրճատումներով)

243

օգտագործվել:

– **Հայկական համայնքն այստեղ կազմակերպված է, միասնակա՞ն է: Որքանով հասկացա, ինչ-որ խնդիրներ կան:**

– Դժբախտաբար, այո, դուք ճիշտ եք: Մինչև 4 տարի առաջ մենք Եվրոպայի ամենից լավ կազմակերպված գաղութներից մեկն էինք՝ հայախոս, միասնական, որը մեծապես օգնում էր Հայաստանին: Ու այս գաղութն արժանի չէր, որ այս օրին հասներ:

– **Խնդիրը ո՞րն է, ի՞նչը փոխվեց:**

– Այսպես ասեմ՝ պետք չէ, որ Հայաստանը խառնվի գաղութների



ներքին գործերին: Այդ գաղութները, եթե գորավոր լինեն ու խաղաղ, շատ ներդրումներ կարող են անել Հայաստանում, օգնել քաղաքականապես ու տնտեսապես: Բայց երբ խանգարում են...

– **Ո՞վ է խանգարում:**

– Չեմ կարող ասել: Անհամություն կա այսօր գաղութի մեջ... Ու դրա արդյունքում՝ այս գաղութն իր պոտենցիալի 15%-ն էլ չի կարողանում օգտագործել: Խնդիրները ներքին չեն: Դրա համար ասում եմ՝ Սփյուռքը մի քանիք: Եթե կարողանում եք՝ Հայաստանում մի բան արեք օգտակար, Սփյուռքի գործերին մի խառնվեք:

Բաբկեն ԹՈՒՆՅԱՆ

ՉԵՄ ՄՈՌԱՆՈՒՄ, ՈՐ ՀԱՅ ԵՄ



Հարցազրույց նկարիչ, ՀՀ, Արցախի ու Չեխիայի, Մորավիայի նկարիչների միության անդամ, արվեստի թեորետիկ մասնագետ, Երևանի մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պատվավոր անդամ Աշոտ Առաքելյանի հետ:

Հին ժամանակներից հայերը փայփայել են իրենց գեղարվեստական սովորույթները, որոնք արտացոլում են յուրահատուկ մշակույթը և բնապատկերները: Առօրյա կյանքի ասպեկտներն արտահայտված են ամենագեղարվեստական ձևով. ասեղնագործության, զարդերի, փորագրությունների և դիզայնի մեջ:

Հայկական նկարչությունը ծաղկում ապրեց 19-րդ դարում: Այդ շրջանի նկարիչները, ինչպես դիմանկարիչ Հակոբ Հովնաթանյանը և ծովանկարիչ Հովհաննես (Իվան) Այվազովսկին, մինչ օրս միջազգային ճանաչում են վայելում: 20-րդ

մանակակից նկարիչների հետ: Այս առիթով զրուցեցինք Աշոտ Առաքելյանի հետ:

Ծնվել է 1948 թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ննգի գյուղում:

1955-1966 թթ. սովորել է Երևանի Վորոշիլովի անվան դպրոցում:

1966-70 թթ. սովորել է Երևանի Մանկավարժական Պետական ինստիտուտում:

Բազմիցս մասնակցել է մասնավոր դասընթացների թե մեր, թե արտերկրում:

1992 թ. մինչ օրս ապրում է Չեխիայի Հանրապետությունում:

– Չնայած եղել են և որոշ մտավորական նկարիչներ, սակայն նկարիչը մտավորական չէ, այլ արվեստի անձնավորություն: Նկարիչը նկարում է ինքնաբերաբար, այն ինչ տրված է ներքուստ իրեն, սակայն երբ նրա մոտ առկա է լինում մտավորականի միտքը, նա դառնում է կատարյալ, իսկ դա ոչ բոլորի մոտ է ստացվում: Գիտեմ և նկարիչի, որն անգամ դիմում չի կարող գրել, կամ էլ գոնե մաքուր հայերեն խոսել:

Երբ ընթերցում ենք պատմության դասագրքերը, մշակույթի բաժնում սկսվում է գիտության և տեխնիկայի զարգացումը, հետո առանձին արվեստի և մշակույթի, վերջում սպորտի:

– **Մենք ունենք մտավորականություն ու լավ նկարիչներ:**

– Հայ ժողովուրդը ի սկզբանե մշակույթի



դարում Մարտիրոս Սարյանը պատկերեց բնության եռությունը՝ նոր լույսի ներքո, իսկ Արշիլ Գորկին մեծ ազդեցություն ունեցավ Նյու-Յորքում երիտասարդ ամերիկյան նկարիչների սերնդի վրա, մինչդեռ Գառգուն և Ժանսեմը հռչակ և համբավ ձեռք բերեցին Ֆրանսիայում: Այցելությունը Սարյանի այգի Ձեզ կծանոթացնի հայ ժա-

– **Մի քանի խոսքով պատմեք, թե ինչպես որոշեցիք դառնալ նկարիչ:**

– Իմ կարծիքով, միակ մասնագիտությունը, որ մարդ չի կարող ընտրել, դա նկարչությունն է: Այն տրված է ի ծնե բնության կողմից, և արտահայտվում է ինքստիներյան:

– **Մտավորական ու նկարիչ մարդու Ձեր բնորոշումը:**

և գիտության մեջ առաջնակարգ տեղում է գտնվել, սակայն քաղաքականության և դիվանագիտության մեջ եղել է թույլ և տկար: Երբեմն մենք նմանվում ենք այն ծեր կնոջը, ով ասում է, գիտեք ես ժամանակին գեղեցիկ եմ եղել, իսկ առօրյա կյանքում



260

հայ ժողովրդին չի հաջողվում աշխարհին ներկայացնել այն բավարար, իսկ թուրքերին դա հաջողվում է գերազանց:

– ԻՆչը կարող է միավորել նկարիչներին:

– Պետության հոգատարությունը, որը համարյա բացակայում է և այն խոչընդոտում է և այն խոչընդոտում է:

– ԻՆչն է տարանջատում մտավորականությանը ու նկարիչներին:

– Ցավոք սրտի ոչ միայն մտավորականությանն ու նկարիչներին, այլ ընդհանրապես մեր ժողովրդին, որ միասնական չէ: Փիլիսոփայական կատեգորիա կա, որ կեցությունն է որոշում գիտակցությունը: Մեր քաղաքական գործիչներին ձեռնառնել է երևի, որ ժողովուրդը և հատկապես մտավորականությունը հասնի գիտակցության, այդ դեպքում իրենց վտանգ կարող է սպառնալ, և ամեն ինչ անում են, որ ժողովուրդը մտածի միայն մի կտոր հացի մասին:

– Դավաճանում եք, որ կգան համախմբման ժամանակները:

– Իհարկե հավատում եմ: Մեր ժողովուրդը երբեմն ինձ թվում է, որ քաղաքական դաշտում աշխարհի ամենապասիվ, իներտ ժողովուրդներից է, ոտքի է կանգնում այն ժամանակ, երբ դանակը հասնում է ոսկորին: Պաղեստինյան մի փոքր ժողովուրդ 40 տարի կռվում է աշխարհի երկու հզոր երկրների դեմ՝ ԱՄՆ-ի և Իսրայելի, և մինչև վերջ ձգտում հասնել նպատակին:

– ԻՆչ հասարակական պահանջ է դրված մտավորական ու նկարիչ մարդու առջև:

– Բարձր պահել հայրենիքի արժեքներն, իսկ վտանգի դեպքում լինել նվաճատիրային:

– Ո՞րն են մտավորականի ու նկարչի տեղը:

– Դժվարանում եմ պատասխանել հարցին: Յուրաքանչյուրն անկախ ամենից ինքստիքյան գտնում է իր տեղը հասարակական կյանքում, սակայն, մտավորականի և նկարչի դերը առանձնահատուկ է, նա իր ազգի ծաղիկն է և ազգին պատիվ է բերում գիտությամբ և արվեստով:

– ԻՆչն է Ձեզ ամենից առավել անհանգստացնում մեր երկրում:

– Այնքան ցավոտ հարց է, որ անհնար է բոլորն ասել: Թերևս կոմունիստների ժամանակ յուրաքանչյուր քաղաքացի իրեն հարգված էր գգում, որ շատ թե քիչ կային օրենքներ, որոնք պաշտպանում էին յուրաքանչյուրին և իրեն լիիրավ քաղաքացի էր գգում: Այժմ երկիրը վեր է ածվել ճորտերի և ճորտատերերի երկրի: Մի 50-100 անձնավորություն տիրացել են երկրի տնտեսությանը, հանրապետության հանքերին: Գոնե Անդրանիկ Ջորավարի խոսքերը հիշեն. «Երբ գլուխները դնում

են բարձին քնելու, մի քիչ էլ ազգի մասին մտածեն»: Հայաստանը վեր է ածվել մոնոպոլ իշխանության: Ամերիկյան տնտեսությունը, օրինակ հենված է միջին և մանր բիզնեսի վրա: Երբեմն ինձ թվում է, թե այդ «մարդիկ» ապրում են միայն ապրելու համար, մի բան, որ կենդանուն է հատուկ: Հայաստանն ունի հարուստ բնական հանքեր, իսկ բնական հանքերը ժողովրդին են պատկանում, որը մի 2-3 տարում կարող է երկրի պարտքերը մարել և եթե այն լրիվ պետական բյուջե մտնի ժողովրդի աշխատավարձը միանգամից 20-40% կավելանա:

Շատ եմ ցավում և գոհիկի հայերենի խոսակցության համար, քաղաքական կուլտուրայի բացակայության համար, անտարբերության ու արհամարական վերաբերմունքի համար, կանանց հանդեպ կտրի վերաբերմունքի համար, 100-ին հասնող լրբանոցների համար, այլասերությունը հասել է բարձրագույն աստիճանի: Եվրոպական ոչ մի երկրում նման ռեստորան-լրբանոցներ չկան: Ժողովուրդն այս վիճակում կգոյատևի թե կխելագարվի, չգիտեմ: Կամ էլ թե չէ աստիճանաբար կփախչեն երկրից: Թող ժամանակ իրենք միայն ... տեսնենք հետո ինչ պետք է անեն, երևի վերջում էլ իրենք երկրի հողերը վաճառեն ու գնան Ամերիկա:

– Մի՞թե Աշոտ Առաքելյանը հիասթափված է:

– Հիասթափված չեմ, սակայն հոգուս խորքում խռովք կա և սպասում արդարության: Մերօրյա ու պատմական ճշմարտությունը թույլ է տալիս ասելու, գիտե՞ք, սիրելի ժողովուրդ, դեռ ավելի պայծառորեն կշողա հայոց բիրիկական փառքի աստղը, ավելի պայծառորեն կճառաչեն նրա Առավոտ լուսուն ու Արեգակն արդար և ավելի առատ լույս կծագի նրա ծիրանաշող հորիզոնում: Ես հավատում եմ դրան ու մաղթում իմ ժողովրդին բարին: Թող եղիցի այդպես, թող եղիցի առավոտ լուսուն մեր հայոց աշխարհին ու մեր ժողովրդին: Եվ այդ աստվածամեծն ժամին օրհնանք կտանք մեր ժողովրդին և Սևակյան Անդրեյի գանգալակոչով կդողանջենք

– Ողբանք մեռելոց ...

– Բեկանենք շանթեր ...

– Կոչենք ապրողաց ...

– ԻՆչ երազանքներ ունեք:

– Մարտ Մարգարյանի մի բանաստեղծությամբ ասած, երանի թե մի օր հավաքվեին իմ անցած տարիները և երանի պես մեկ-մեկ հյուր գալին ինձ: Նաև մեկտեղված և մեկտեղված տեսնեի իմ ժողովրդին մեկ ընդհանուր պատմական հայկական հողում:

– Ձեր կարծիքով ինչպիսի կարգավիճակում են գտնվում մեր երկրի երիտասարդ նկարիչները:

– Կցանկանայի ամուր կամք դիմանալու նկարչի ճակատագրին, քանի որ նկարիչները հարստանում են միայն մահվանից հետո:

– Իսկ մեր ավանդույթների հետ ինչպե՞ս վարվեք:

– Պահպանել աչքի լույսի պես, այնպես ինչպես մուսուլմաններն են պահպանում:

– Խոսք՝ ուղղված մեր հայ մտավորականներին ու նկարիչներին:

– Մի՞րե՛լ ի՞րար: Մարդու ամենամեծ արժանիքը հայրենիքն է ու պատիվը: Պատիվ ունեցող հայրը իր միակ տղային էլ է ուղարկել պատերազմի հայրենիքը պաշտպանելու:

– Եթե Ձեզ առաջարկեին այլ մասնագիտություն, կիրա՞ծարվե՞իք նկարչույց:

– Նորից կընթանայի նույն ճանապարհով:

– Եթե կարողանայիք ժամանակը հետ տալ, ի՞նչ կփոխե՞իք Ձեր կյանքում:

– Ամեն ինչ կսկսեի այնպես, ինչպես սկսվել էր սկզբից: Կատ թե լավ:

– Մի քանի խոսքով պատմե՛ք Ձեր առաջիկա ծրագրերի մասին, որքան հաճախակի եք մասնակցում ցուցահանդեսներին:

– Յուրաքանչյուր տարի 1-2 անհատական և մեկ կամ երկու կոլեկտիվ ցուցահանդեսներ:

– Իսկ որն է Ձեր սիրած նկարիչը, որ երբևէ նկարել եք և մինչ օրս առաջնորդվում եք աշխատելիս:

– Գյուստավ Կլիմտ, Վան Գոգ, Գոգեն, Կլոդ Մանե, Շուլտեն, Մինաս: Բազմատեղյակ եմ համաշխարհային խոշորագույն նկարիչների ստեղծագործություններին, որոնցից ստացել եմ էսթետիկական ճաշակ, սակայն չեմ ընդօրինակել նրանց, ստեղծել եմ իմ ինքնուրույն արվեստը:

– Ապրելով հեռավոր Չեխիայում, ի՞նչ հայապահպան գործունեություն եք ծավալում, պահպանելու համար մեր հայկական դարավոր մշակութային ու պատմական արժեքները:

– Յուրաքանչյուր տարի 2-3 հոգված չեխական մամուլում հայ ժողովրդի մշակույթի, պատմության, Արցախի մասին: Երկու անգամ Մոսկվայի TV 7 ռուսական հաղորդում Հայոց Ցեղասպանության մասին: Երբեմն դասախոսություններ Հայաստանի մասին:

– Ձեր խրատը այսօրվա հուսալի երիտասարդներին ու սկսնակ նկարիչներին:

– Ամուր կամք, քանի որ նկարիչը հիմնականում գնահատվում է ժամանակից ուշ, միաժամանակ վե՛հ ու բարձր պահել հայրենիքի պատիվը, սիրել ժողովրդին: Ապրելով հեռավոր Չեխիայում չեմ մոռանում, որ հայ եմ:

Գարիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծանր գրույց մեծ արտիստ Ռաֆայել Բոթանջյանի հետ



...Եվ, այնուամենայնիվ, ընկած հասարակությունը մշակութային, այսինքն՝ կենդանության նշաններ ցույց տալ չի կարող: Բայց եթե Գիրքն ասում է, թե սկզբից բանողն էր և ցույց տալով մեղավորին՝ գլխի է զգում, թե առաջին ու ամենամաքուրը բարը որի կողմն էր, ապա ինչ էր, ինչ կարիք կա իրար միա ուտել, թե կապը կտրա՞նք իշխանն է, թե նրա տակ թայտացող հասարակական լեշը: Եթե նրանք դեռ ծոց ծոցի են, ուրեմն, նրանց միջև փոխզիջում ու լուր համաձայնություն կա. կոխվել նրանցից հեռու՝ ավելի բարձրում է, որտեղից սրանց գլխին մեր «ուրիշը» պիտի կրակ տեղար, սրանց դինջ կյանքն այնպես հարավներ, որ սրանք միայն իմաստություն հայցեն Տիրոջից: Բայց ուր է. Գիրքիկայի անկումից մինչև մեր արևելից կոդով Ռուսաստանին տրանսպլանտացվելը, այսինքն՝ հինգ դար շարունակ ամուլ, դափուրտարակ նստած էինք. ջհանդամ, թե քթենք ինչ տակ նոր Եվրոպան էր գոյանում, գերմանական դասական փիլիսոփայությունն էր աշխարհը գրավել. պահ, իտալական վերածնունդ, չէ մի չէ Մոլիեր, Դեկարտ, Մալինոզա...

Մեր վանական գրագետներին պիտի թողնենք, նրանցով լցնենք մեր գլխի ամայի անապատը: Բա երկու հազար տարվա թատրոն ունենող Էթնոսս ինչպե՞ս դարեր շարունակ զսպեց իր մորուց արտիստիկ, ցեղական պլաստիկ գալարումները, հը: Բա մեր փոքրիկ լցված հակամշակութային հինգ դարերից հետո ինչ եղավ, վայ, թիթիգ աշխարհ, էլի փոխվում էս, բա մենք հավեն ունենք մեր խիտունջի վրա գոնե մի ծակ անենք, տեսնենք էս ինչ խժոժություններով է դարձյալ բռնվել էս հիմար աշխարհը. տես է, ֆրանսիացիք մարդու իրավունքների հռչակագիրն են թափահայրում, ասա ա յ խալիս, էդ անտերն ինչների դ էր պետք հացուցում ր է, ի ն է:

Դրանում 19-րդ դարն է, պահո... Բուսիան, Հունաստանը, Անգլիան, անգամ Ռուսաստանն ու Թուրքիան հեղափոխական տենդի վեջ են, նոր աշխարհակարգ է հաստատվում. բա մենք ներվեր ունենք ընկնենք էդպիսի անախորժ պատմության մեջ և ցնցենք պարսկական խանության վերածված մեր երկրի անդրերը «Օլմագ». հենա մեր «ուրիշներին» գլխներիցս ռադ կանենք, թող գնան ծվարեն Գալկաթա, Մադրաս, Ադրիատիկի հեղավոր փիեր, մի դար անց էլ Թիֆլիս, Ռուսաստան, Համգալման միայն թե մեր աչքից հեռու խաղան իրենց մշակութային խաղերը, կամ էլ թող «բազազ խանի բժի» պես աչքաբաց լինեն ու ջոկեն, թե երբ է պետք հանել ֆուրածկեն ու գլխին ցիլինդր հագցնել, կամ այնպես կենալ արխալուղը, որ անգլիական մահուղէ բաժկունի տակից հանկարծ դրա երեսը չերևա: Էնտղ էլ ասում էր որտեղի ց եկավ այս անապատացումը. բա կարծում էր՝ մի 20 տարվա իշխանություն ու հասարակություն կարող էր այսքան քայլափոխություն անել. չէր կարող: Միջին հայաստանցին, էլ չեմ ասում դասական սփյուռքահայը գլուխդ կջարդի, թե այս մասին հետը խոսես, բայց, փառք շատ, որ Հայաստանում կան, ապրում են այն եզակիները, որոնց հետ հնարավոր է սկսել այս կարևոր գրույցը. շնորհակալություն մեծ արտիստ Ռաֆայել Բոթանջյանին:

– Զեզ սրճարանում այսպես շքեղ բազմած տեսա ու հիշեցի, որ երբ դպրոցական էի, հատուկ ձեռք տեսնելու համար ժամերով պտտվում էի «Առազաստ» սրճարանի շուրջը, որ Նայեմ, թե ինչպես էր ծխում Զեր գեղեցիկ ծխամորժը, ապշահար հետևում էի Զեր արտիստիկ ժեստերին, երբ նստում էիք սրճարանում ամբողջ սրճարանը բռնում էր Զեր թավ

օղիկոլոնի բույրը... Ինչո՞ւ եմ այսքան մանրամասն նկարագրում, որովհետև Դուք տիպիկ քաղաքային կերպար էիք, որից թափվում էր բարձր կուլտուրան: Զաղաքը քաղաք է դառնում, երբ նրա վրայով այսպիսի մարդ-իրադարձություններ են անցնում, որոնք քաղաքային մշակույթ են տեղով մեկ: Բայց, կարծես, այս պատգամները տեղ չհասան, որովհետև մեր քաղաքամայրը ոչ մի կերպ չի կարողանում իր գավառականությունը թողափել, քաղաքային ավանդական տարածքները ասիմիլացվում են, մաքուր քաղաքային տիպը գնալով տարրալուծվում է, ինչո՞ւ:

– Գիտեք, այդ ամենն անձով գալիս է և, ցավոք, անձով գնում է: Անձի գնալուց հետո, իսպառ անհետանում է այդ կուլտուրան: Մենք ունենինք փայլուն անհատականություն ուղեղ Լևոն Ներսիսյան. նա մի առանձին մարդ-քաղաքակրթություն էր, բայց նրա հետանալուց հետո իր գիծը հետը գնաց, ցավոք սրտի: Անձն է իր հետ բերում երևույթ, կուլտուրա, մտածելակերպ: Այդպիսին էր նաև Քոչարը: Ինքը տարօրինակ մարդ էր, բայց հետը մի ուրիշ մշակույթ էր բերում:

– Դե, նա ժամանակին Դիկատոյի, Լեժիի հետ էր ցուցադրվում, հետո էլ նա բավականին ուշ վերադարձավ հայրենիք, կարծեմ 30-ականների վերջին, ուր ահագին չհասկացվածության ու փորձությունների ենթարկվեց, իսկ մինչ այդ Ներսիսյան դպրոցի կրթությունն ու միջավայրը, հետո՞ Փարիզ, Վենետիկ... Կրթությունն ու միջավայրը կառուցում է մարդուն, եթե անգամ նա հզոր գենետիկ ժառանգություն չի ստացել. վերջերս, օրինակ, նկատել եմ, որ այն միջավայրերում, ուր ծանոթացել եմ քննարկվող նյութին չտիրապետելու պատճառով, տարիներ անց այդ նյութն ականջիցս տեղափոխվում է գիտակցական խորշեր է և ակամայից գիտելիք, իմացություն դառնում... Այնպես որ, խոսեք ինձ հետ ամենաբարդ բաների մասին, միևնույն է, ես դա մի օր կհասկանամ:

– Էնց հիմա դրա մասին էլ խոսում ենք: Քոչարը, երբ արդեն վատ էր լսում, խնդրեց իր համար լսողական ապարատ բերեն: Բայց հետո հանեց ապարատը և սկսեց շրթունքներին հետևելով կլանել ինֆորմացիան: Ասացի «Ինչու չես դնում ապարատը», ասաց «Մա մեխանիզմ է և վերցնում է ձայնն այն ուժգնությամբ, ինչպես լսվում է: Այդ պատճառով էլ ես համահավասար եմ լսում անցնող մեքենայի ձայնը և ձեր խոսքը, իսկ մարդկային ուղեղը կարողանում է գատել դրանք»: Հնարողական բան ունի լսողությունը, վերցնում է այն, ինչ մեզ պետք է:

– Փաստորեն, ականջն էլ աշխատելիս մտածում է, չէ՞ որ այն մարդկային ականջ է:

– Այո (ծիծաղում է Վ.Ս.):

– Իսկ հիմա թույլ տվե՛ք սկսել մեր հարցազրույցը...

– Օ, դեռ չե՛ս սկսել...

– Այս ընթացքում ես քաջություն էի հավաքում Զեզ տալու այն հարցերը, որոնք, ի դեպ, դիսկ չեմ անի տալ Հայաստանում ու սփյուռքում ապրող առնվազն 9,5 մլն հայի՝ զուտ իմ անկտանգությունից ելնելով, մեղմ ասած, գլուխս կջարդեն: Տեսե՛ք՝ Կիլիկիայի անկումից մինչև 1827 թիվը՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, մեր հինգ դարը դատարկ է լրիվ, մշակութային լուրջ արժեքներ չենք ստեղծել: Աշխարհի հետ կատարյալ խզված ապրել ենք մեր փորահացի կյանքը: Վերցնենք միայն 17-րդ դարը՝ իտալական վերածնունդն էր բարձրանում, աշխարհում արդեն Լուպե դեՎեզա, Ռասինի ու Մոլիեր կար, բայց մեր գրականությունը դեռ ճառի ու թե՛րգրական սահմանում էր, բայց գրականություն է, կարծեմ, թատրոնի հիմքը, չէ՞, իսկ մենք սնանկ ճարտասանությունից այն կողմ չանցանք, մեր մշակույթի խարխիսներն էլ զցեցիկը երկրից դուրս: Վխր արդեն 16 դար է աղեկկատ չենք աշխարհին: Համաձայն չե՞ք:

– Ես համաձայն եմ Զեզ հետ: Շատ հաճախ առանձնացնում են նկարչությունը, բայց ժանրային նկարչություն էլ չի եղել, մեզ մոտ չեն զարգացել այն ճյուղերը, որոնք զարգացել են այլ ազգերի մոտ: Թատրոնին անդրադառնամ. ընդհանրապես, հանդիսատեսն է ստեղծում թատրոն, նրա կարոտը, ցանկությունը տեսնելու դա: Մենք չունենք հանդիսատեսի կուլտուրա, որը նայել և կարող լինել թատերական գործողության: Մենք չունենք հանդիսատես: Եթե չունենա հանդիսատես, որտեղի ց ունենա թատրոն:

– Բա լիքը-լիքը բերան ասում ենք՝ ունենք 2 հազարամյա թատրոն, բայց նախորդ դարերի թատրոնն էլ քաղաքային տարածության գլուխամեջն էր. քաղցեմիս գալիս էր ոչ այնքան մի բան տեսնելու, որքան իրեն տեսցնելու, ոչ այնքան միտը ու զգացմունք, որքան հասարակական կեցվածք, ստատուս ստանալու, կարճ ասած՝ թատրոն հաճախելը ավելի շատ սոցիալական ակտ էր, ուր օթյակներում ծավալված հասարակական թատրոնն ավելի էր, քան բեմում ծավալվածը: Ես ուզում եմ հասկանալ՝ որտե՛ղ և ի՛նչ պատճառով ընդհատվեց մեր քաղաքականության գիծը.

280

այսօր ավելի լավ է մենք սա քննենք ու հասկանանք, պարապը լցնենք ճշմարտության, որ կարողանանք արժեքներ, նոր իմաստներ ստեղծել: Թե՛ չէ մեզ խաբկանքի վրա օրորելով՝ վերջնական դատարկության կարող ենք հասնել:

– Սա պատմեմ, որպես Ձեր հարցի պատասխան: Ինձ և իմ կողմնակիցներին ժամանակին շատ էր հետաքրքրում Լիտվայի թատրոնի աննախադեպ երևույթը, որ միանգամից մեջտեղ եկան դերասանական հետաքրքրի տիպարներ, որոնք ուրիշ էին, բոլորովին այլ և նրանք, կարծես, գրավում էին նաև ռուսական թատերական տարածքը: Մեզ համար շատ զարմանալի էր սա, և մենք հասանք մինչև Լիտվա, որովհետև ուզում էինք հասկանալ այս երևույթի պատճառները: Ուսանող էինք այդ ժամանակ: Մեզ ասացին, որ պետք է գնաք քաղաքից դուրս՝ մի 3-4 ժամվա ճանապարհ, որ հասնենք մեր ուզած թատրոն: Մենք գիշերը նստեցինք ավտոբուս, իջանք բացարձակապես մի խուլ գյուղում: մեզ թվաց, թե խաբել են, որովհետև այդ հեռավոր ու մոլորված գյուղում ի նշ թատրոն: Մի մարդուց հարցրեցինք, թե որտեղ է այստեղ թատրոնը, բայց, հաստատ հավելված էինք, որ այս մարդը կասի՝ ձեռք էք առնում, ես գյուղում ի նշ թատրոն: Բայց ինքն անհազիս վիրավորվեց, որ մենք չգիտենք իրենց թատրոնի տեղը և մի քիչ էլ դժկամությամբ տեղը ցույց տվեց: Տեսնեցիք ի նշ բլուրի վրա մի ֆանտաստիկ շենք իր ժամանակակից ոճով, իսկական թատրոն այդ Պանելվեժիս կոչված գյուղում: Մտանք սպասարան, ուր 30-40 միջազգային կարգի ժուռնալիստներ էին սպասում: Ներսուս ռեժիսորն է բազմաձև, ով միանգամից ընդունեց Հայաստանից ժամանած երկու ռուսանդներին, չնայած այդքան սպասողներ ուներ դրսում: Ու ի նշ ասաց: Ասում է՝ «Ես այստեղից չեմ սիրում բացակայել, մեկ-մեկ երբ ինձ հետաքրքրում է, թե ինչ է կատարվում Մոսկվայի թատերական աշխարհում, մի շաբաթով կամ 10 օրով գնում եմ»: Եվ ահա այդ գյուղի թատրոնը Մոսկվայի թատերական կյանքում եղանակ էր փոխում: Այդ գյուղը կրթված հանդիսատես ուներ՝ ահա ամբողջ գաղտնիքը:

– Ես միշտ հավատացել եմ, որ մի լավ մասնագետը մի ամբողջ համակարգ արժե, բայց մենք միշտ էլ այնքան «աջաբաց» ենք եղել, որ նրան հայտնաբերել ենք հենց բնում ու եթե չենք կարողացել խեղդամահ անել, վերջում ցույց ենք տվել երկրի դուռը: Բայց արդյո՞ք արդար է ամեն բան բարդել միայն հանդիսատեսի վրա, որովհետև մեր պարզ ժողովուրդը տեղով թատրոն է՝ ահագին արտիստիկ, նրա մեջ կա, պահպանված է քաղաքակրթական գեներտիկ կազմը. օրինակ՝ Դուք սկսել եք Ձեր կարիերան Կապանից, եղե՛ք է, որ մի ներկայացում տապավի, հանդիսատեսն արհամարի, չգա, բարձրանաք բեմ և ժողովուրդը լինի անհաղորդ:

– Չէ, Կապանում այդպիսի դեպք չեմ հիշում: Բայց տեսեք, մենք խաղացինք Բուլղարիայում, ապա Ռուսաստանում Մոսկվայում «Ավտոբուսը» ներկայացումը, ու ի նշն էր հետաքրքրի. հետո, երբ մեզ մոտ խաղացինք, հանդիսատեսն անընդհատ անհարկի ծիծաղում էր առաջին մասում, և երբ երկրորդ մասն սկսվեց, այդ ծիծաղողներն այլևս դափնիծում չէին: Բայց, ամեն դեպքում, ինչու է դրսի հանդիսատեսը չէր ծիծաղում այդ տեղերում, իսկ ներսինը ծիծաղում է:

– Կարծում եք՝ տարբեր էթնիկ հանրություններ նույն զգացողությունները պիտի ունենան որևէ նյութի նկատմամբ:

– Իմ կարծիքով, բաներ կան, որոնք համալարվելային են և ազգայինի հետ կապ չունեն: Այն, ինչ հուզիչ է հուզիչ է բոլորի համար, եթե հուզիչ չէ՝ ոչ մեկի համար էլ հուզիչ չի լինի:

– Իմիջիայլոց, ծիծաղն ահագին լուրջ ինդիկատոր է մարդու կամ, թեկուզ, տվյալ հանրության խելքը չափելու համար. ասա՛՜ ի՞նչն է թեզ համար ծիծաղելի, ասեմ՝ որքա՛ն խելք է մնացել գլխիդ: Էլ չասենք, թե որքան դաժանություն կա թաքնված այդ ցիկլիզմի մեջ, այդ հռոհոցի տակ: Ես, օրինակ, սարսափում եմ, երբ աչքովս են ընկնում մեր շուրջիցի այսօրվա շուկուխիները. տեսնես գիտե՞ն նրանք արդյոք, որ ավելի շատ վախ են տարածում, քան ժպիտ ու ծիծաղ: Ես այսօրվա պես հիշում եմ այն մանրապատումները, որ Ձեր կատարմամբ ցուցադրվում էր մեր այն ժամանակվա միևնույն քաղաքում հեռուստատեսությամբ, և դա իսկապես, որ ինտելեկտուալ, խորը եկթատեստերով հումոր էր: Լավ, բա այս հարցում ինչու՞ այսպես խեղճացանք. ոչ մի տարածքում իրար չենք շարունակում՝ եկողը հեծանկիվի հայտնության իր կոնցեպտն է պնդում:

– Դրանից միայն Դուք չեք սարսափում, դա իրոք սարսափելի է և ոչ մի կապ չունի հումորի հետ: Դա էլ թատրոն է և այստեղ էլ պետք է պրոֆեսիոնալ կատարում, մտածված սցենար և ռեժիսուրա: Հայերն իզուր շտապեցին այդքան մեծ թռիչքով նետվել շոու բիզնեսի գիրկը, դրան էլ պետք էր գնալ ավելի կիրք ու դաստիարակված: Իմիջիայլոց, կոլեգաներիցս մեկն ասում է ոչ թե շոու, այլ «շովու», այսինքն այն ամենաեթան գրեթեպոլիտերը, որն իրեն ընդամենը թուլացնում է: Այդ սարսափելի երևույթը նաև Ռուսաստանում է, երբ մեջտեղ եկան այդ քունդիքլաբերը, որոնք ընդամենը խաղում են գրգիռների վրա և

դատարկաբանություն են, ուրիշ ոչինչ:

– Դարո՞ւն Զոթանյան, հիմա էլ հայ կինոն քննենք, եթե չեք առարկի, իհարկե: Ամերիկյան հայտի սցենարիստներից մեկի մի միտքը վերջերս ինձ ցնցեց, ասել էր՝ «Այն ժողովուրդը, որը XXI դարում իրեն չի ճանաչի գեղարվեստական ֆիլմերում առաջարկված դերպարներում, կարող է անհետանալ»: Ու ես ոչ միայն մեզ չեմ ճանաչում համաշխարհային կինոմատոգրաֆում, այլ հենց մեր նկարած ֆիլմերի մեջ: Մեկ ոսկյա տարերթիվ կա ընդամենը՝ 1969 թվական, երբ նկարվեցին Փարաջանովի «Նռան գույլը» և Արտավազդ Փելեշյանի «Մենք» կինոֆիլմերը: Այս երկու ռեժիսորներին եթե հանենք, մենք այսօր մեր ֆիլմերից ո՞րը կարող ենք դնել մեծ կինոյի սեղանին ու չամաչել դրա համար:

– Մեկ էլ Քյոսայանի «Տղամարդիկ» ֆիլմը, ուրիշ բան չունենք: Գիտե՞ք, մի քանի օր հետո խոստացել են ցույց տալ «Տղամարդիկ» ֆիլմը, որը չի խախտում քաղաքային կինո հասկացության ճիշտ մակարդակը, դրա համար արձան էլ դրեցին: Ինձ համար այդ ֆիլմը շատ թանկ է ոչ թե նրա համար, որ ես ներկա եմ այնտեղ, այլ որ Քյոսը կարողացավ հայկական բնավորությունը արվեստով, ճիշտ խաղարկել:

– Շնորհակալություն անկեղծության համար. ծանր խոսք ասացիք, անշուշտ, բայց ես էլ եմ այդպես կարծում, որ սովետի անասիման ռե-ստրաներով կարելի էր, անշուշտ, ավելի լուրջ գործեր ստեղծել, բայց մենք մեր տաղանդավոր դերասան Սոս Սարգսյանից գերադասեցինք Նա-հապետ ստանալ՝ անվերջ զգեցող ցեղասպանվածի որոգայթները, իսկ հորեն Աբրահամյանի պես հզոր դերասանին էլ ժամանակ առ ժամանակ երկրից քշելով՝ անապատացրինք նրա իրական կինոտարածությունը: Ես գիտեմ, թե «Տղամարդիկ» ֆիլմի գլխին ինչ օյններ են դրել, բայց Էդմոն Զոսայանն այն ռեժիսորն էր, ով գիտեր ինչ սիստեմի հետ գործ ունի և այնպիսի պահեստային դուբլեր էր նկարել, որ կարող էր ամբողջը կրկին վերամոնտաժելով ֆիլմի մեջը, այնուամենայնիվ, պահել:

– Ինքը շատ սկզբունքորեն էր մոտենում գործին, ես նրան շատ եմ հարգում: Խիստ պրոֆեսիոնալ էր աշխատում. ասենք, նկարահանումն սկսվելու է ժամը 9-ին, ինքը ժամը 7-ից օպերատորի հետ ամբողջ տարածքը ման էր գալիս, նայում էին, մանրամասն քննարկում էին տեսարանը: Դա չեմ կարող մոռանալ՝ ֆիլմը հանձնելու պահին էր, եկավ հանձնաժողովը, նստեցին, ցույց տվեցինք, ասացին վատ չի, բայց 35-40 նկատողություն կա ու ասացին բոլորը, վերջում էլ, թե «Ե՛րբ կարող ենք հաջորդ դիտումը կազմակերպել», հարցրին, իրենք էլ պատասխանեցին, թե վաղը: Պատկերացնում եմ՝ մոտ 40 ուղղում ու վաղն ենթ:

– Դե, 40 ուղղումն արդեն այլ ֆիլմ է, բայց հիշեցի, որ, ասենք, մեր հրա-շալի ֆիլմերից մեկը՝ «Շոր ու Շորշորը», 13 օրում է ստեղծվել:

– Իմիջիայլոց, «Տղամարդիկ» ֆիլմի հաջորդ դիտումին, իսկապես, այլ ֆիլմ նայեցինք, և ընդամենը մեկ օրում նա կարողացել էր լրիվ նոր ֆիլմ ստեղծել: Բայց սրան էլ ասին՝ 10-15 նկատողություն, և այստեղ էր, որ Քյոսն ասաց, որ ֆինալին հանկարծ ձեռք չտան, ինքը դա չի փոխի ոչ մի դեպքում:

– Երբ Կուստուրիցան Յայաստանում էր, ես նրան ուղիղ հարցրի, թե աղբառ երկրները կարո՞ղ են կինո ունենալ, լուրջ կինոարտադրություն ծավալել: Կուստուրիցան ասաց՝ «Ո՛չ, ավելի լավ կլինի դուք սևեռվեք վավերագրական կինոյի վրա, որովհետև մեծ կինոն փող է ուզում, հա-մակարգեք, ինդուստրիալ ցանցեր և այլն... Սա ինձ համար կրկնակի ցավոք թեմա է, չարոսակներ: Բա այս դեպքում հայ կինոն գնա մեռնի՞», Դուք ինչպե՞ս եք տեսնում նրա ապագան:

– Ցավոք սրտի, միակ ճանապարհը, եթե, իհարկե, այս գլոբալիզա-ցիա հասկացությունը հաղթի, այն է, որ մենք դառնանք ընդհանուր կինոնկայի անդամ:

– Այսինքն, համատեղ ֆիլմեր նկարե՞նք այդ շուկայի այլ խաղացողների հետ:

– Այո, որովհետև այստեղ առաջին հարցը ոչ թե արտադրությունն է, այլ շուկան: Շուկան է թելադրում օրենքները: Շուկայում իրացվելու համար պետք է շուկային հարմար ֆիլմ նկարահանես, այսինքն՝ այնպիսի ֆիլմ, որ սպառվի, շուկային հետաքրքրի: Լավ, ինչքա՞ն կարող ենք մենք Եղեռնի մասին ֆիլմ նկարել և հույս ունենալ, որ դա կհետաքրքրի մարդկանց: Իհարկե, չի հետաքրքրի:

– Զրուստ Մաթևոսյանին ասում էին՝ գրի Ցեղասպանության մասին, չէր գրում, մի տող անգամ չգրեց, չխոսեց այդ մասին: Կամ էլ խոսեց այլ ֆորմաների մեջ՝ առանց անուն տալու. զարմանալի մի գուգադի-պությամբ էլ Զարենցն, օրինակ, իր «Դանթեականում» անգամ թուրք բառը չի օգտագործել՝ այդքան ջանք է անցնելով Ցեղասպանության միջով: Մեծերն արժեքներ են ստեղծում ժամանակի մեջ, նրանք հենց ժամանակն են ստեղծում, թե՛ չէ անգամ ես կարող եմ զբաղվել ժամանակի վավերագրմամբ:

– Ես խաղացել եմ Հրանտ Մաթևոսյանի փոքրիկ պատմվածքնե-րից մեկում՝ Օմակուտի մասին ֆիլմում. այնտեղ իմ կերպարն ան-ընդհատ կրկնում էր՝ «Կարծում աս, կարծում աս... Երկար տեքստ չկար ասելու, հենց դրանով էր ինքը խփում՝ «Կարծում աս, կարծում աս...»... Այս

խեղձ մարդը ոչ մի բան էլ չի կարողանում անել, միայն հպստատում է, որ կաթում ա: Բայց դրա մեջ այնքան խորունկ բան կա՝ այ մարդ, էլի նույն է, էլի, մեր գլխին հա կաթում ա, էլի մենք, ներողություն, բայց մի քաք չենք կարողանում ուտենք, միայն խոստովանում ենք, որ կաթում ա:

– *Այ դա կինո է, և ինչո՞ւ ոչ՝ հենց Ցեղասպանության մասին, իսկ Ցեղասպանությունը վաղուց կինո չէ, խաղարկվող, տանող գաղափար չէ. ափսոս, սովետի ահռելի ռեսուրսներ, որ մենք ծախսեցինք մեր այս քաղաքական նպատակի վրա, այնինչ, եթե հզոր գեղարվեստական արժեք էս ստեղծում, մարդիկ ուզում են ճանաչել քեզ էլ, քո պատմությունն էլ: Այդպես ավելի ընկալելի ես դառնում աշխարհին, քան քո գոհի բարոյականություն, տուժածի խիջում:*

– Իհարկե, այդպես է. արվեստն առարկայի, երևույթի պատկերումը չէ, այլ պատկերացումները դրա մասին: Հրանտ Մաթևոսյանից մեջբերումները, որ երբեք անում եմ ես, փիլիսոփայական են. գյուղն այստեղ արվեստի տարածությունն է, որտեղից սնվում է այդ փիլիսոփայությունը: Նրա գործերը բնավ էլ գյուղի պատկերում չեն, իհարկե:

– *Իրենից լավ ոչ ոք չի ձևակերպի. ասում է՝ «Ծմակուտը ես եմ»: Մաեստրո ջան, քաղաքային ֆուկլորն ասում է, որ գիրք եք գրում, ճի՞շտ է:*

– Գիրքն արդեն գրված է: Տարիներ շարունակ զգացել եմ, որ երբ իմ խոսքը գրի են առնում, մի այլանդակ բան է ստացվում՝ չոր, անհասկանալի մի բան: Դրանից ծնվեց այս գրքի գաղափարը: Ինչ ես պատմում եմ՝ ուրիշ է, իսկ ինչ գրում են՝ բոլորովին ուրիշ, դրա համար որոշեցի գրքում ունենալ աուդիո տարբերակը՝ DVD-ով, որտեղ ես պարզապես գրուցում եմ տարբեր հարցերի մասին:

– *Մեզանում, ցավոք, չկա կենսագրի ինստիտուտը. ո՞վ պիտի ամբողջացնե՞ր Ձեր ողջ ժամանակությունը, դրա համար էլ Դուք եք լծվել այդ գործին: Բայց ո՞նց եք արել հարցազրույցները, Դուք Ձեզ հարց եք տվել, Դուք էլ պատասխանել:*

– Այո, և բավականին էլ սուր հարցեր եմ ինձ տվել:

– *Մաեստրո, գիտե՞ք ինչ հիշեցի. մի օր լրագրող ընկերուհիս ասաց, այսօր կույր չունեմ, ոչ էլ ժամանակ, խնդրում եմ ինքդ քեզ հետ հարցազրույց արա, սուր հանձնեմ: Ես էլ կարծեցի, թե դա մի հեշտ բան է ու համաձայնեցի: Դիմա մի քանի ժամ անցել է, ես լուվել եմ մի տեղ ու չեմ կարողանում դուրս գալ, ինքն իմ այնպես ներսն էմ գցել, դիմ տվել պատիկ, որ հնարավոր չէ իմ իսկ հարցին մի պատասխան գտնել: Ու ստիպված եղա այդ հարցը ոչնչացնել, որ սներես չլինեմ: Դիմա Ձեր մոտ հարցազրույցը հա՞րթ էր ընթանում, թե՞ իմի պես դրամատիկ:*

– Ես այնքան դժգոհ էի իմ խոսքի սղագրումներից, որ պատրաստ էի ամեն արգելք էլ հաղթահարել: Այնտեղ, օրինակ, հարցնում եմ, թե ինչո՞ւ այս կամ այն մրցանակին ինձ չարժանացրին և անկեղծորեն էլ պատասխանում դրան: Փափագյանի մասին էլ կա: Ավելի լավ է մարդիկ միացնեն, լսեն, թե ինչ եմ պատմում ես Փափագյանի մասին:

– *Փափագյան, իհարկե, մենկ առանձին քաղաքակրթություն է, բայց, ահա, դարձյալ, մեր հողից չի ծագել, սերել է ֆրանսիական, խոսակալան թատերական դարձից: Նա հայրենիք եկավ՝ հետը բերելով այդ ահռելի մեծ կուլտուրան: Բայց ինչո՞ւ է այնպես ստացվում, որ տեղում մենք միշտ ավելի տկար ենք:*

– Չտանցվի, որ ես ինքս իմ մասին եմ խոսում և ինձ եմ գովում, բայց բանն այն է, որ հենց սկզբից, երբ սկսվեց իմ արվեստի ճանապարհը, մտածում էի՝ «Որտեղից է եկավ այս կուլտուրան», որովհետև իմ շարժումները, ոճը «հայկական» չէր ու այսօր էլ, կարծես, «հայկական» չեն: Սրա համար ես դրսի մոտավորապես 100 ֆիլմում նկարվել եմ. երևի Արմեն Ջիգարիսյանից հետո մեր հայ դերասաններից ամենաշատ նկարվածն եմ:

– *Ջիգարիսյանյան իր տիպիկ կոպկասցու արտաքինով պահանջված էր սովետիկին-տարածության մեջ: Իհարկե, նրա դերասանական տաղանդն էլ պետք չէ անտեսել, ինչն ինքը հաստատեց իր վարպետությամբ: Բայց հենց միայն նրա սերնդի առնվազն 10-ը Ջիգարիսյանյան մնաց հայ կինոյի հույսին և դրսի կինոհրապարակ չհասավ: Սակայն Դուք որպես կոպկասցի չեք իրացվել դրսում, ա՛յ, սա է, կարծում եմ, Ձեր ֆենոմենը, իսկ դա արդեն մրցակցային ավելի դաժան ու բարդ կոպի է:*

– Այո, այստեղ զարմանալ պետք է. նայեք, ես խաղում եմ ֆրանսիացի և թվում եմ ֆրանսիացի, խաղում եմ իտալացի՝ ես հրաշալի իտալացի եմ, այսինքն՝ ես, հաստատ, տեղական գույն չեմ: Ես կարող եմ ֆրանսիացու համար ընկալվել իտալացի, միևնույն ժամանակ ուրիշ երկրից եկած մարդ, ով իր հետ բերում է ուրիշ կուլտուրա, ուրիշ գույներ:

– *Մենևուր մի գիծ կա Ձեր կերպարում՝ խորամանկ մարդը: Ձեր կարծիքով, ինչո՞ւ են ռեժիսորները հենց Ձեր մեջ նրան գտնում: Բայց Դուք խորամանկ մարդ չեք, կարծես, միևնույն ժամանակ Ստանիսլավսկին մեզ հուշում է, որ «Մարդն ինչ էլ անի, չի կարող հեռանալ իրենից»՝ դերասանին հուշելով խորապես ընկնել և չկորցնել ինքն իրեն:*

– Փիլիսոփայորեն ասած՝ «Человека судят не по его поступкам, а по его отношению к своим поступкам»: Մարդն անգամ կարող է

սպանել մեկին, բայց ինչո՞ւ է սպանել, կարող է ինքը արդարացում ունի, և այդ արդարացումը միշտ ավելի կարևոր է, քան արարքը: Իմ կերպարները շատ մարդկային են, որոնց նշանները կարող են նաև բացասական լինել: Այսինքն ինքը կարող է շատ լավ մարդ լինել, բայց արարքներով՝ անավոր դեմք:

– *Այսօր հատկապես սերիալային դերասանների շրջանում շատ քաղցեական մոտեցում կա. շատերը խորշում են, այսպես կոչված, բացասական դերերից, որովհետև ուզում են ժողովուրդն իրենց նույնացնի իրենց խաղացած բարի, կոյս կերպարների հետ: Արդեն անհասկանալի է՝ արևը ուզում են դերասան լինել, թե՛, ասենք, ժողովրդի ծայրով դեպուտատ կարգվեն: Բայց վերադառնալով նորից Փափագյանին՝ ինքը ժամանակին օրիորդ է խաղացել. ահա, թե ի՞նչ է թատրոնը և ո՞րն ենք հասցրել նրան մենք:*

– Ինձ համար մինչև հիմա զարմանալի է: Հիմա անուններ չտամ, բայց ժամանակին, երբբեմնադրվում էր «Մուսա լեռան 40 օրը», այնտեղ մի թուրքի կերպար կար. երբ մի դերասանի առաջարկեցի այդ դերը, նա նեղացավ, թե՛ «Ինձ առաջարկում եք խաղալ թուրքի կերպար»: Սա արտառոց էր ինձ համար, որովհետև եթե դու կարևորում ես թուրքի կերպարը, պետք է այնպես խաղաս, որ դա արժեք ունենա, այսինքն՝ այն, ինչ ուզում ես, դնես մեջը: «Թոքսալանա» ֆիլմում ես խաղացել եմ գլխավոր վեզիր Բերահիմ փաշա, ընդ որում, ռեժիսորն ինձ լրիվ այլ դերում էր պատկերացրել: Բայց երբ կարդացի սցենարը, աչքիս ընկավ մի փոքր կերպար և նրան ասացի. «Ինձ թվում ա ես ավելի լավ գործ ունեմ այնտեղ անելու, Բերահիմի դերում»: Մեկ էլ ռեժիսորը, թե՛ «Գիտե՛ս, Ռաֆայել, երբ քեզ տվեցի այն դերը, մի քանի միտում ունեի: Նախ, ֆիլմում ծայրից ծայր դու պետք է լինես, երկրորդը՝ պետք է լինես ամենավարձատրվող դերասանը», ասացի: «Ինձ հիմա չես հետաքրքրում այդ հարցերը, ես պետք է խաղամ այս կերպարը»:

– *Դե, լավ արտիստն էլ մի ուրիշ փորձանք է ռեժիսորի գլխին. տաղանդավոր դերասանը սցենարը միշտ խառնում է իրար: Ասում են՝ Փափագյանը մի քանի էջ տեքստը ընչու էր ու տեղը մի ծեստ, մի հայացք դնում: Բայց Դուք էլ ռեժիսոր եք և լավ գիտեք, թե ինչ է նստում այդ ամենը կուլ տալը, մանավանդ, որ այդ ընթացքում արտիստը գաղափարական մաշո է դառնում ռեժիսորի գլխին:*

– Մեթոջը ես այդպես եմ կառուցել, բոլոր ֆիլմերում, որտեղ ես կամ: Միշտ ես այդ խորամանկությունն եմ դիմում: Ինձ համար կարևոր չէ, որ տակը գրված լինի սա Ռաֆայել Քոթանջյանի մտածածն է, ինձ համար կարևոր է, որ Ռաֆայել Քոթանջյանի արածը լինի պրոֆեսիոնալ: Ես երբեք չեմ ասում, որ դա իմ գաղափարն է, պարզապես ես արտոնությունը դիվանագիտորեն եմ վերցնում, այսինքն՝ ռեժիսոր, ես ձեռ գաղափարը հասկացա, և ինքը մտածում է, որ ինքն, իրոք, ասել է դա, և ես ձիշտ եմ ընկալել:

– *Այդ տեխնոլոգիան միշտ հաղթանակե՞լ է, չէ՞ք ունեցել պարտված բանակցություններ:*

– Չի եղել պարտություն, որովհետև ընթացքում մոտանում ես գաղափարն ով տվեց, բայց ռեժիսորը համոզված է, որ դա հենց իր տված գաղափարն է:

– *Գիտեք, ահա այսքան ժամանակ է գրուցում ենք, բայց գլխումս մի մեծ պատերազմ է՝ ասե՛լ, թե՛՝ չասե՛լ այն, ինչն ինձ շատ անհանգստացրեց: Որպես մարդ, կին չեմ կարող չհարցնել. շատ նիհարել եք, դալկացած տեսք ունեք, ի՞նչ է պատահել Եզ, չլինի՞ վատառողջ եք, կամ մի մեծ դարդ կա, երկի, կներեք...*

– Հա... Իրար ետևից գնացին իմ խաղընկերները: Գնաց նաև իմ ամենամոտ ընկերը, որի հետ մենք 50 տարի ընկերություն ենք արել: Նա Կոնստանդնուպոլիսի պրոֆեսորներից էր, որի սաները միջազգային մրցույթներից վերադառնում էին միշտ հաղթանակած հիմնականում գրավելով առաջին տեղը:

– *Ո՞վ:*

– Ռաֆայել Հակոբյանցը:

– *Յա, ցավակցություն...*

– Մենք տարեկիցներ էինք: Ինձ համար շատ ծանր էր: Ես կարող էի գնալ նրա ետևից, դա շատ հավանական էր, որովհետև... Ոտքերս ուռեցին, շնչառությունս կտրվեց: Բժշկին էլ ասացի, որ 50 տարի յոգայով եմ զբաղվել և ինձ համար ոչ մի հիվանդություն երբեք պորթում չի եղել, ես մինչև 60-ը դեղորայք չեմ օգտագործել: Բայց սարսափելի վիճակում էի, այդպիսի բան ինձ հետ չէր եղել:

– *Մաեստրո, բա Յալե՛պը. Սոս Սարգսյանի հայտնի մենախոսությունը հիշեցի՞՜ Յալե՛պ-Յալե՛պ...*

– Երբ եմ ինքնաթիռն ընկավ Յալեպում, իմ վերեր բացվեց, ես դուրս եկա թևի վրա ու միանգամից 3-4 երեխաների դուրս հանեցի: Հետո ընկերս թռավ ներքև՝ մի 3-4 մետրից, ես երեխաներին բաց էի թողնում, ինքը ներքևից բռնում էր: Հետո երբ հերթական անգամ շրջվեցի երեխաների կողմ, ինչ տեսնեմ՝ մեկն իր ճամպրուկի պատճառով մտուրդ խցանել է, ու անցելու տեղ չկա: Ես քիչ եմ հայիտյում, բայց այդ ժամանակ հայիտյանքների տարափ եկավ. երեխաները ինքնաթիռում, սա իր ճամպրուկն է փրկում: Քաշեցի, մի կերպ

պոկեցի, 2-3 երեխա դուրս եկավ, բայց այդ ժամանակ կապիչները պոկվեցին, ու ես պտտվելով ընկա մի սուր քարի վրա ու կրունկս փշրվեց: Հետո ասացին, որ կրունկս 40 կտորի է բաժանվել, և ինձ անմիջապես տարան հիվանդանոց, թե «21 օր պիտի պառկես ոտքդ վերև»:

– **Իսկ ինքնաթիռում՝ մահվան սարսափն աչքի առաջ, ի՞նչ էիք մտածում, ինչի՞ համար էիք ափսոսում:**

– Մենակ մտածում էի՝ «Կիսադա՞մ էլի, թե՞ ոչ»:

– **Այսինքն, վատահ էիք, որ ողջ ու առողջ եք մնալու և մնում էր խաղա՞լը:**

– Վստահ էի, որ ողջ եմ մնալու: Անգամ երբ այդ արագ բժիշկը սարսափեց, թե ոնց եմ պատրաստվում հաջորդ օրն իսկ այդ իմ փշրված ոտքով խաղալ, ես ասացի՝ «Դուք իմանա՞լու եղեք, մանավանդ որ ես այլ տարբերակ չունեմ»: Ասում էր՝ «Եղալիս բան չի կարող լինել, դու ամբողջ կյանքում կկաղաս», բայց ես խաղացի իմ «Մերն ու ծիծաղը» հենակով, և հանդիսատեսը միայն հաջորդ օրը գլխի ընկավ, թե ինչն ինչոց է:

– **Ձեզ ամենաշատն ի՞նչն է ցավեցնում ու տխրեցնում:**

– Շատ բաներ կան, որ չեմ հասցնում անել: Ունեմ իմ կուրսը և փորձում եմ այդ կուրսին տանել իմ ուղղությամբ: Ինձնից հետո իմ դերասանական գիծը կարող է անհետանալ, դրա համար եմ փորձում իմ աշխարհն իրենց ներկայացնեմ, որովհետև ափսոսում եմ, որ դա էլ պետք է գնալ ինձ հետ: Ես դա, ցավոք սրտի, հասկանում եմ: Ամենագլխավորը՝ գոնե մի կուրս թողնել: Միայն թե 21 հոգուց գոնե 7-8-ը կարողանա պահել մտածելակերպը, մտեցումները: Խույս ունեմ, որ այդպես էլ կլինի... Մտածում եմ՝ ինձ մնացել է առնվազն 12 տարվա կյանք, ու դա բժիշկները չեն ասել: Ես մի քիչ էլ աստղացույցին եմ հավատում, ըստ որի, ես հեռանալու եմ՝ բնականաբար, տեղափոխելով հոգիս մի այլ մարմնի մեջ:

– **Մանեստր, բայց Դուք ահագին իմաստուն եք աստվածային գործերի քննությամբ տարվելու համար. ախր, դա, կարծես, Նրա որոշելիքն է, Ինքն էլ կասի՞ ե՞րբ:**

– Ինքն արդեն ինձ ասել է:

– **Լռում եմ...վերջ:**

2րուցեց Վարդուհի ՍԻՄՈՆՅԱՆԸ

Արամայիս Սահակյանը Միեր Մկրտչյանի մասին

Հարցրեք որևէ մեկին՝ ո՞վ է Միեր Մկրտչյանը, կատասխանի. «Ֆրունզիկ՝կը ... Ո՞վ չգիտե՞ Ֆրունզիկ Մկրտչյանին»: Ստացվում է, որ Միեր գրում ենք, Ֆրունզիկ կարդում: «Փշոտ» Միերին հանդիպելու համար Ոգնին մեկնեց Ծաղկաձոր՝ գրողների ստեղծագործական տուն, և ծաղիկների մեջ գրի առավ Միեր Մկրտչյանի «փշոտ» մտքերը:

– **Ո՞վ է Պաղտասար աղբարը:**

– Ես եմ, ո՞վ է, – պատասխանեց Միեր Մկրտչյանը:

– **Ինչպե՞ս թե Դուք եք, – զարմացավ Ոգնին, Պաղտասարը ծիծաղելի և դյուրահավատ մարդ է, որին խաբուր են և բամբասում: Մի՞թե Ձեզ էլ են խաբել ու բամբասել:**

– Շատ: Ընդհանրապես, վատ լուրքի հաճույքով են լսում, պատմում և հավատում: Մեր թատրոնի հետ հյուրախաղերի էի արտասահմանում, իսկ Հայաստանում տարածել էին, անգամ «ականատեսներ» էին հայտնվել, թե այդ ընթացքում ավտոմեքենայի տակ մարդ եմ գցել Հայաստանում: Բանը հասավ այնտեղ, որ երբ վերադարձա արտասահմանից, նույնիսկ ինձ հետ եղած դերասան ընկերներս հարցնում էին. «Ճիշտ է»: «Բայց չէ՝ որ երկու ամիս միասին ենք եղել», – զարմանում էի ես: «Ի՞նչ կա որ, մարդիկ պատմում են...»: Ստացվում է, որ մեծ մասը լսածին է հավատում, ոչ թե տեսածին:

– **Ընդհանրապես, Դուք ձեզ համե՞ստ եք համարում:**

– Ատելով ասում եմ փոքրոգիներին: Ես իմ արժեքը գիտեմ: Ճանաչում եմ ինձ: Կարևորն այն է, որ մարդն ինքն իրեն ճանաչի, մանավանդ արվեստում: Միթուր եմ համեստ մարդկանց, բայց չեմ սիրում համեստ կարողության տեր դերասաններին: Կա մի լավ, կա մի բոլորովին, ահա իմ նշանաբանը:

– **Ձեզ ամենուր դեմքով ճանաչում են: Ինչպե՞ս եք զգում այդ ժամանակ:**

– Իմ մասնագիտությունն այնպիսին է, որ ինձ ճանաչում են: Սովորական է դարձել:

– **Ձեզ երբեք նայո՞ւմ եք հայելու մեջ:**

– Շատ: Բայց ինձ համար ամենագեղեցիկ մարդը նա է, ով գեղեցիկ բովանդակություն ունի:

– **Ուզում եք ասել, որ Դուք գեղեցիկ եք: Պարզ է: Իսկ... կենդանիներ սիրո՞ւմ եք:**

– Երբ նայում եմ կենդանիներին, ամաչում եմ, որ... երկու ոտքով եմ քայլում: Շատ եմ սիրում կենդանիներին: Բրենց նմանների դեմ գոնե զրպարտագիր չեմ ուղարկում: Միակ կենդանին, որ չեմ սիրում, կենգուրուն է: Ասում են՝ երբ վագրը հարձակվում է, կենգուրուն լքում է ձագին, որպեսզի ինքը փրկվի...

– **Իսկ կարելի՞ է ատել մի դերասանի, բայց նրա հետ սեր խաղալ բեմում:**

– Եթե տաղանդավոր դերասան է, բեմում մոռանում եմ ատելությունն և նույնիսկ սիրահարվում:

– **Ինչպե՞ս եք զգում ներկայացումից առաջ և հետո:**

– Ներկայացումից առաջ հուզվում եմ, բարկանում, վիրավորվում, արանձնանում, իսկ ներկայացումից հետո մեքենայով երկար շրջում եմ, նույնիսկ ուշացած անցորդներին տուն տանում...

– **Եղե՞լ է, որ դադի՞նում զգաք որևէ մեկի սառը հայացքը:**

– Ամեն անգամ մի հոգի լինում է: Ինձ միշտ թվում է՝ նա կամ շատ խելոք է, կամ շատ հիմար: Մեծ մասամբ վերջինն է լինում:

– **Իսկ եղե՞լ է՝ բեմում մոռանալ, որ բեմում եք:**

– Ամեն ներկայացման մեջ մի քանի ուժեղ տեսարաններ կան, երբ ես լրիվ մոռանում եմ, որ ներկայացում է, որ ես դերասան եմ:

– **Ինչպե՞ս եք քնում գիշերները:**

– Վա տ: Ընդհանրապես քիչ եմ քնում, այն էլ՝ ինքնաթիռներում և... գրիմի ժամանակ:

– **Ե՞րբ իմացաք, որ Ֆրունզե անունը... ազգանուն է:**

– Հրաչյա Ներսիսյանն ասաց: Առաջին անգամ տեսա թատրոնի բակում: «Ի՞նչ է անունդ», – հարցրեց: Պատասխանեցի՝ Ֆրունզե: Ասաց. «Դա, բիվայետ»: Հետո կրկին դիմեց ինձ. «Աֆիշը կարդա, տես՝ հոս ի՞նչ պիտի խաղան այսօր»: Նայեցի, նայեցի, մի կերպ կարդացի, հուզված պատասխանեցի՝ «Օթելլոն» է: «Ե՛ս կխաղամ, թե՛ անոնք», – ասաց: Ասի՝ դու կխաղաս, Կարպետ: Ասաց. «Դա, բիվայետ»: Գնաց տարք քայլ, շուտ եկավ «Լսիր, դու 1, Կատովսկի»: Ես այդտեղից զգացի, որ իմ անունը ազգանուն է:

– **Վարդան Աճեմյանի կարծիքն ինչպիսի՞ն էր Ձեր մասին:**

– Նա՛ ինձ Երևան հրավիրեց: Աճեմյանն ասում էր՝ երբ Ֆրունզիկին դերը տալիս ես, առաջին հերթին կատվի նման նայում է, որ բերանը չվառի: Հետո սկսում է երկար տնտղել: Միանգամից չի ուտում: Սկսում է կռիվները՝ հեղինակի հետ, հետո կովում է դերի հետ, դերից հետո կովում ինքն իր հետ: Կովում է այնքան, որ հեղինակին էլ սիրի, մյուսին էլ սիրի, իրեն էլ սիրեն...

– **Այնուհանդերձ՝ Ձեր առաջին ուսուցիչն ո՞վ է:**

– Մայրս՝ Սանամը: Անցյալ օրը բացեցի մորս աշխատանքային գրքույկը: «Սանամ» էր գրում ստորագրության փոխարեն, «մ» տառն էլ ծովա ծ-հոգնա ծ: Գրելիս հոգնել էր մինչև մ-ին հասնելը: Էնտեղ գրված է կրթություն տարրակա ն, միջնակա ըզ, թե՛ բարձրագույն: Գծված էր «տարրականի» տակ: Մի բան, որը պակաս է բոլոր բարձրագույն և միջնակարգ ավարտածներիս մոտ: Մայրս ուներ տարրական կուլտուրա, որ չունենք մենք այսօր:

– **Երևում է՝ շատ եք նեղացած մարդկանցից:**

– Ո՛չ: Ես փնտրում եմ մարդու մեջ բարին, լավը: Երբ մտնում եմ թատրոն, մեկը իմ բարնին կոպիտ է պատասխանում, անմիջապես մտածում եմ. կա-չկա տաքսին է շատ փող վերցրել, կամ տանը վեճ է եղել: Ես չեմ նեղանում մարդուց, ես ուզում եմ թափանցել նրա սրտի արանետները...

– **Եթե ոսկե ձուկ բռնեք, և նա կատարի Ձեր ցանկությունները, ի՞նչ կլինորդեք:**

– Որ վերացնի բամբասանքը, անտարբերությունը, նախանձը:

– **Մի՞թե իսկապես այդքան դժգոհ եք...**


– Ուրիշ քաղաքներում արվեստասերները մոտենում, խելացի հարցեր են տալիս, ինքնագիր են խնդրում, իսկ մեզ մոտ գոռում են. «Ֆրունզ» կամ «Ֆրունզիկ ջան, գնանք խմենք», և կամ «Արտասահմանից ի՞նչ ես բերել...»:

– **Ուրիշ ի՞նչ խնդիր է Ձեզ հուզում:**

– Ամեն մարդ իր տեղում լինի:

– **Մենք էլ ցանկանում ենք, որ Դուք էլ Ձեր տեղում լինեք՝ մայր թատրոնում...**

«Այն աշխարհները, որոնք Մակեդոնացին կամ Բոնապարտը հրով ու սրով չեն գրավել, ես գրչով եմ գրավում»



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՆՅԱՆԻ «Վերնիսաժ» գիրքը ընթերցողին է հասնելու լրամշակված տարբերակով: Նոր գրքում տեղ է գտնելու ևս հինգ պատմվածք: Մեր գրույցի թեման «Վերնիսաժ» է: Հարցերը քաղված են գրքում տեղ գտած վիպակից, պատմվածքներից, հրապարակախոսական հոդվածներից:

«ԵՍ ՏԻՐԱՎՈՐ ԵՄ ՈՒ ԶՈՐԱՎՈՐ»

– «Հիմա եկել է կաթիլները հավաքելու ժամանակը, որպեսզի մի բաժակ ջրի պես չխմեմ կյանքս»: Թվում է՝ գտել եք երջանկության, կյանքը վայելելու գաղտնիքը, մեկ այլ գործում կարողում ենք. «Բայց ես ո՞նց կարող եմ երջանիկ լինել, եթե շուրջս դժգոհություն է ու թշվառություն: Ես ոսկու շուկայում արծաթ եմ վաճառում, որտեղ շուրջս բոլորն են ոսկի վաճառում: Այստեղ թշվառությունը ոսկեղենիկ է»:

– Երջանկությունը կյանքն է, կյանքն ապրելը վայելք է, կյանքը մանրամասն ապրելն առավել քան վայելք է: Իսկ ավելի երջանիկ լինելու համար հարկավոր է, որ քո շրջապատն էլ երջանիկ լինի, որ քո խմած ջրի մեջ մի պտուղն աղ կամ դառը դարչին չլցվի, որ հարամ չարվի մի կում ջուրը, որ մարդը խմում է: Մեր ղեկավարները նպատակադրված ավան-թալան են անում, ինչն արտահայտվում է կարմիր գծերով, արագաչափերով, կուտակային ֆոնդերով, շարունակվող սեփականաշնորհումներով: Դու մոկտայով 10 հազար դրամ ես կորցնում Վերնիսաժում, մեկ էլ իմանում ես, որ 47 միլիոն դոլարով հանք են վաճառել: Հանքը վաճառեցին, այսինքն, քո պետականության ոտքի տակի հողը վաճառեցին: Ես պետությունը մերն է, բայց պարզվում է, որ ուրիշինն է, ինչ-որ մեկի գրպանինն է: Այսպես որ գնա, գրպանսաչափ հայրենիք ենք ունենալու:

– «Պոեզիան որք է ու անտե՛ր»:

– Եթե ես նման բան եմ ասել, երևի նկատի եմ ունեցել, որ գրողն է որք ու անտե՛ր: Անոթ է, որ երկիրը գրողին ու գրականությանը տիրություն չի անում: Բայց առավել վատ է, երբ ընթերցողն է անտարբերության մատնում գրողին: Ես իշխանությունների, գրողների միության կողմից գնահատված չեմ, բայց ընթերցողի կողմից ոչ որք եմ, ոչ էլ անտե՛ր: Երբ մարդիկ գալիս են Վերնիսաժ՝ իմ գրքերը գնելու, ինձ հետ խոսելու, շփվելու, ես տիրավոր եմ ու գորավոր:

– «Ազատագրում» ակնարկում ասում եք. «Ես դուրս եմ գալիս գրողների միությունից և դեպի կյանք եմ գնում»: Ի՞նչը փոխեց այդ «ազատագրումը»:

– Երբ ես գրողների միության անդամ էի, ակնկալիք ունեի, որ իմ գրքերը կտպագրվեն, մրցանակ կստանան, արժանախներում կընդգրկվեն, ծաղկաձողյան հանգստի, վերաբերմունքի ակնկալիք ունեի: Հետո տեսա, որ ակնկալիքներս ի դերն են ելնում, ազատագրվեցի այդ ամեն ինչից: Եթե մի տեղ ես մտնում, առևտրի լեզվով ասած, առքուվաճառք է, պիտի տաս ու ստանաս: Ես գրականություն եմ տալիս, բայց ոչինչ չեմ ստանում, էլ ի՞նչ իմաստ ունի, «կոստյոյ ամը (տոմսը) պիտի ինձ գարդարեք»: Ես այդ գարդարանքը տվեցի իրենց ու ազատագրված դուրս եկա այդ շենքից:

– «Գրողներ կան, որ իսկապես չեն մեռնում: Մտնում են իրենց գրքերի մեջ ու ապրում»: Ավելի շատ գրքերում եք ապրում, քան կյանքում, Վե-

րնիսաժում, շփումների մեջ:

– Ես ապրում եմ կյանքում, գրականությունն ինձ համար պարապ ժամանակի խաղալիք է, իմ կյանքի հավելվածք: Ես գրում եմ, որ ինձ լավ զգամ, իսկ իմ հիմնական վայելքը մի կում ջրի մեջ է՝ կյանքի մեջ:

– «Պիտի հակադարձեմ ձեզ, ասում էիք՝ «Ես ապրում եմ պատմվածքից պատմվածք»:

– Ամեն ճիշտ չէ, որ ճշմարտություն է, ճշմարտության հակառակն էլի ճշմարտություն է: Պատմվածքից պատմվածք ես ապրում եմ, որովհետև շատ նվիրում կա այդ գործերի մեջ: Ապրումը պետք է գրելու համար: Ես գրում եմ, երբ գրում եմ, գրում եմ նաև այն ժամանակ, երբ չեմ գրում:

– «Որ խեղճությունը կյանքի հետ մտավ, գրչի հետ էլ դուրս է գալու: Խեղճից ի՞նչ գրող»: Մեր գրողները խեղճ են:

– Խեղճ են: Ես այն գրականության կողմնակիցն եմ, որ Տոլստոյն է գրել: Եթե խեղճ ես, ավելի քան բարի ես, բայց խեղճի բարությունը ուժեղի բարությունը չէ: Եթե մարդ ապրելու փող չունի, հաց ու փող է մուրում, մեծապատիվ մուրացկան է դառնում, նրա գրականությունը պիտի բարոյալուրովի: Բարոյալուրված մարդու գրականությունը ի՞նչ պետք է լինի: Ես Տոլստոյի կողմնակիցն եմ, Գյոթեի, որ իշխան էին, ու նրանց գրականությունն էլ իշխանագուն էր:

– Ձեր գործերում տեղ են գտել նաև գրչնկերների հետ առկա տարածայնությունները: Չե՞ք կարծում, որ թղթին տալով՝ մի տեսակ հավերժացնում եք այդ ամենը:

– Ես գրել եմ ոչ թե նրա համար, որ այդ մարդկանց կամ այդ տարածայնությունները հավերժացնեմ կամ ոչիս հանձն ու վրեժ լուծեմ, ես այդ մարդկային հարաբերությունների մեջ գեղարվեստ եմ տեսել: Հենց այդ գեղարվեստական ընկալումը, արվեստն եմ որսացել ու հանձնել թղթին:

– «Ճնշողներս կային, հայրս ու մայրս ապրում էին իմ երազում: Մի-գուցե մենք էլ ապրում ենք Ուրիշի երազում: Միայն թե այդ Ուրիշը չարթնանա»: Դուք ո՞ւմ երազում եք ապրում:

– Այն ժամանակ, երբ գրել էի, ավելի պատրաստ էի պատասխանելու այդ հարցին, հիմա սառել է հրաբուխը, դժվար է անդադառնալ: Բայց, կարծում եմ, մենք Աստծո երազում ենք ապրում, թեև իմ Աստվածն այն Աստվածը չէ, որ գրքերի մեջ է, այլ այն Աստվածը, որ գրքերից գալ կա՝ և չինացուն է, և արաբիքը, և ֆրանսիացուն, և հայիքը: Այսինքն, Աստված կա ոչ այնպես, ինչպես գրքերում է, այլ այնպես, ինչպես ինքը կա: Ես նրա երազում եմ ապրում:

– Լրացնեմ. «Ես ինչպես հարկն է Աստծուն չեմ հավատացել և ինչպես հարկն է եկեղեցի չեմ այցելել, բայց, ամեն անգամ եկեղեցի հասնելիս, խաչակնքում էի, ինչ խոսք, ավելի շատ իմ, քան Աստծո գոյություն համար»: Այնուամենայնիվ, հասկանալի չէ՝ Լևոն Զավախյանը հավա-տում է Աստծուն, թե՛ չի հավատում:

– Լսեք, ես վախկոտ եմ, մարդիկ էլ հիմնականում վախից են հավատում, որ օրը թարս չգնա, կյանքը ճիշտ ընթանա: Այս ամենը պարարտ հող է կրոնի համար, բայց կրոնը ոչ թե Աստծով է ապրում, այլ ավելի շատ իր իշխանությամբ: Ես ընդվզում եմ դրա դեմ ինչ-որ տեղ, բայց նաև վախենում եմ: Որովհետև մարդն այնքան թույլ արարած է այս հսկա տիեզերքում, ո՞վ եմ ես, որ չվախենամ: Իմ գոյության համար դողում եմ ես, այնպես, ինչպես բոլորը: Չկա մարդ, որ այդ ներքին զգացողության առաջ լկտի լինի: Ինչ-որ տեղ վախ կա, այդ վախը հավատ է ծնում, հավատը՝ Աստծուն:

«ԴԱ ԱՅՆ ՊՏՂՈՒՆՑ ԴԱՌՆՈՒԹՅՈՒՆՆ Է, ՈՐ ԽԱՌՆՎՈՒՄ Է ԶՈ ՄԻ ԲԱԺԱԿ ԸՄՊԵԼԻԲ ԶՐԻ ՄԵԶ»

– «Գնացեք Նար-Դոս՝ դազադագործների փողոց, և հարցրեք՝ ի՞նչ է երջանկությունը, և նրանք ձեզ կասեն, թե ինչքան երջանկություն

320

են տարել»: *Կյանքը երջանկություն է: Իսկ ո՛րը մնաց մահվան, հավերժության թեման, որին այնքան հաճախ են անորոշառնում գրողները:*

– Երկիրն իր առանցքի շուրջը պտտվում է, ինչպես որ մենք՝ կյանքի շուրջը: ՈՒՐգում եմ մարդիկ ոչ թե հենց այնպես ապրեն, այլ զգան ինչ է երջանկությունը, գուցե այդ դեպքում հանցանքներ ու զանցանքներ չլինեն: Ես ինչ չափով փառաբանում եմ կյանքը, նույն չափով ասում եմ՝ ինչքա՜ն հետաքրքիր է, որ կա մահը: Եթե մահը չլիներ, կտոկոսությունն ինչքա՜ն շատ կլինի, ական-թալանյինները ավելի ոգևորված կլինեն: Ձապող բան կա մահվան մեջ, մահն է, որ գեղեցկացնում է կյանքը: Մահանալիս մարդն ակամա հիշում է՝ ում է վախճանվել, ում է վրձվել, ու մեկ հարց է առաջ գալիս՝ ինչի՜, այդ ինչի՜:

– **Ձեր «Վերնիսաժ» վիպակում այսպիսի երկխոսություն կա.**

– «Իսի դու գրելո՞ւ ես ապրում:

– Բա որ մեռնեմ, քեզ թվում ա՞՞ ինչո՞ւ եմ ապրելու:

– Դիմա դու ապրելո՞ւ մասին ես մտածում, թե՞ մեռնելու:

Դիմա՝ Դուք ապրելո՞ւ մասին եք մտածում, թե՞ մեռնելու:

– Ես ամեն օր մտածում եմ մահվան մասին, ընդվզում եմ, բայց չեմ վախենում մահից, դա ավելի է կարևորում կյանքը:

– **«Մինչ այդ կարծում էի՝ ապրելու համար ապրելն էլ բավական է: Բայց հիմա պարզվում է, որ ապրելու համար փող է պետք»:** Այս բանաձևին համակերպվե՞լ եք:

– Յուրաքանչյուր մարդ իր կյանքի նշանդոն ինքն է դնում: Անփող կյանքը, այնուամենայնիվ, այն կյանքը չէ, որ մարդն ապրի: Դա այն պտղունց դառնությունն է, որ խառնվում է քո մի բաժակ ըմպելիք ջրի մեջ: Ավելի լավ է, որ չափավոր ապրես, հոգիացած չապրես, բայց հնարավորինս կարողանաս հասնել նրան, ինչին կոչված ես: Ես նախարար չեմ, պաշտոնյա չեմ, հացն ու ջուրը վաստակում եմ առօրյա առևտրով, ինչպես Մանուկին հաց էր վաճառում, կամ ուրիշ գրող հաշվապահությամբ է զբաղվում: Բայց այն պալատները, այն աշխարհները, որոնք Մակեդոնացին կամ Բոնապարտը հրով ու սրով չեն գրավել, ես գրչով գրավում եմ: Եվ ինչ-որ տեղ այս չափավոր կյանքի մեջ ինձ թագավոր եմ զգում:

– **«Պոտոր հորձանուտն ինձ ափ հանեց Վերնիսաժում: Բայց երկնքի տակ կյանքն ինձ համար միանգամայն հայտնություն էր: Այնտեղ էին քաղցածները, գործազուրկները, զրկվածները, հոգնածները, բեռնավորվածները, նեղյալներն ու լքյալները: Փրկությունը յուրաքանչյուրիս մեջ էր: Հայրենիք ու Աստված մեզ իսպառ մոռացել էին: Փող...փող...փող...»:** Պարոն Ջավախյան, հետխորհրդային անցումային տարիներից առաջօր մի՞թե ոչինչ չի փոխվել:

– Կյանքն էլ է փոխվում, մենք էլ ենք փոխվում, բայց կան բաներ, որ չեն փոխվում. իշխանություններն ապրում են ական-թալանի համար, ժողովուրդն էլ՝ իր գոյությունը պահպանելու: Եղբորս հարցրի՝ մեր Ալավերդու ժողովուրդը ո՞նց է ապրում, ու նա մի դաժան խոսք ասաց. «Դե, ո՞նց ասեմ, սովին, աղքատությանը հարմարված ժողովուրդ են»։ Չէի ուզի, որ մեր ժողովուրդը հարմարվեր իր թշվառությանը: Կուզեի պայթյուն տեսնել, որ բոլոր տեսակի ձորերն ու հորերը հոսք ցնդեին ու ազատ կյանքը վայելելու հնարավորություն ստեղծվեր: Յուրաքանչյուր գրական գործ, որքան էլ հանձարելի լինի, ինչ-որ շրջանակի մեջ գոյություն ունի: Կյանքն էլ ինչ-որ տեղ օրենքի զապվածության շրջանակների մեջ պետք է լինի, հասկանում եմ, բայց մեր շրջանակները շատ են ճնշող, նեղող, խեղճացնող: Ուզում եմ պայթյուն լինի, նոր շրջանակ գծվի, որն ավելի կգեղեցկացնի կյանքը, ոչ թե կճնշի այն: Բնձ միշտ հետաքրքրում է՝ այս ի՞նչ աճապարարություն է, այսքան ճնշումից հետո էս ո՞նց են ապրում, մեկ էլ հետաքրքրում է՝ բա էդ վերնները վախ ու սարսափ չունեն՝, այդքան թալան կլինի, որ անույն են, չեն մտածում՝ ո՞նց է ժողովուրդն ապրում: Պայթյուն կլինի, չէ՛:

«ԹՇՎԱՌ ՄԱՐԴԸ ԶԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԱՉԱՏ ՌԻ ԱՆԿԱՆ»

– **«Ազատ խոսքը քարը քարի վրա չթողեց: Փլատակներից նոր հայաստան ծնվեց՝ ազատ ու անկախ: Նոր երկրում ես միանգամայն հին էի ու անպիտան»:** Տպավորություն է, որ ազատ, անկախ Հայաստանի դեմ է մեր կռիվը: Մի՞թե բոլորիս երազած երկիրը ազատ ու անկախ Հայաստանը չէր:

– Հայնեն ասում է՝ Գերմանիա, ո՞վ է քո ճշմարիտ որդին, ու ինքն էլ պատասխանում է՝ նա, ով համարձակ թքում է քո դեմքին: Ազատությունը եկավ, անկախությունը եկավ, բայց դրա հետ նաև

թշվառությունը եկավ, իսկ դա կապում է մարդու ձեռքն ու ոտքը: Թշվառ մարդը չի կարող լինել ազատ ու անկախ:

– **«Տեսնեք, որ իշխանության գան, են ժամանակ է՞լ են ասելու, թե ճշմարիտ մտավորականը ընդդիմադիր պիտի լինի»:** Դուք ընդդիմադիր չե՞ք:

– Առողջ վտանները միշտ հոսանքին հակառակ են լողում, այդ առումով դու քո լողը տալիս ես: Ուղղակի մտավորականը չպետք է մակամունավորների հացից օգտվի կամ գրողների միության գրոշներից: Նա պիտի ապրի իր կյանքով, իր խոսքը ասի, ու թող ոչ ոք էլ իսկական մտավորականին իր տեղը ցույց չտա: Նրա տեղն իր գրվածքների, իր նկարների, երաժշտության ու քանդակների մեջ է:

– **Ինչպես նշում եք, Նոբելյան մրցանակներն անգամ շատ դեպքերում շնորհվում են քաղաքական դրոպապատճառներով: Ի՞նչ կասեք քաղաքականության ու գրականության կապի մասին:**

– Մրցանակը, այո, քաղաքականացված է: Տոլստոյը Նոբելյան մրցանակ չստացավ, բայց այնպիսի մարդիկ են ստանում, որ կարողում են ու գրամանում, թե ինչու ստացան: Ես իմ օրինակով ասեմ՝ լավ գործեր շատ ունեմ, բայց ինչու է «Քիրվան» այդքան շահարկվում: Յոթ տարի առաջ եմ գրել, բայց հիմա էլ սրճարաններում վրաս են հարձակվում, թե հայրենադավ գործ ես գրել: Ես դա գրել եմ ոչ թե որ անուն հանեմ, սկանդալ լինի կամ Թումանյանի նման իշխաղություն քարոզեմ, պարզապես ինձ հուզել է այդ թեման, գրականություն եմ տեսել, դրա համար էլ գրել եմ:

– **Դուք նշում եք, որ հին հռոմեական արեւայում, կրկեսում, թատրոնում, կինոյում, գրքերում կռիվների, վայրագությունների պատճառը հանդիսություններում չէ, այլ հանդիսատեսի մեջ: Դուք խոսում եք մարդկանց վայրագության ծարավի մասին, իսկ ինքներդ ասում եք, որ անգամ երազում մարդ չէք սպանում: Գուցե բարության ու սիրո ծարավը ունեն մարդիկ:**

– Այդպես գրելով, ես ինձ չեմ առանձնացնում: Մեր գրողներից մեկին հարցրի՝ ինչու է քո գործերում այդքան շատ էքստրիմը, ասաց՝ չեմ պատկերացնում մեկին, որ գոնե երազում մարդ չսպանի: Երևի ճիշտ է ասում, բարբարոսական շրջանից եկած բնագոյներն ապրում են մարդու մեջ: Մեր նպատակն ի՞նչ է, որ եթե կան մարդկանց մեջ այդ բնագոյները, մոռացվեն, բթացվեն, ուղի բացենք, որ մարդն իր մտավոր, հոգևոր աշխարհով մարդ մնա:

«ԻՄ ՍԵՐՆ ԱՇԽԱՐՀԻ ԶԱՓ Է»

– **«Ըո հասցեով սերն է եկել»:** Գրողները շատ են խոսում սիրո մասին: Դուք՝ հազվադեպ:

– Մի առավոտ կինս ասաց՝ Լևոն, դու չես կարող լավ գրող լինել, ուրիշ գրողները սերեր են ունենում, ապրում են դրանով, այրվում են, ինչքան քեզ գիտեմ, նման սերեր չունես, ո՞նց ես առանց սիրո գրականությունդ յուր տանում: Ու եզրահանգեց, որ չեմ կարող մեծ գրող լինել, որովհետև մեծ սեր չունեմ: Բսկ ես ասում եմ՝ այն սերը, որ իմ մեջ է, դա ամենամեծն է, ես սիրում եմ կյանքը, և իմ սերն աշխարհի չափ է: Մերն է պտուղ տալիս, ասելությունը, չկամությունը, նախանձն անպտղաբեր են: Ես սիրահարված եմ կյանքին, իհարկե, եղել են մեծ սիրո մեջ փոքրիկ էպիզոդներ, դրանք էլ որոշ առկայծուժներով իմ պատմվածքներում երևան են եկել:

– **Ճշմարիտ գրականության Ձեր ընկալումը:**

– Ժամանակին ես լուսավորության նախարարության տեսուչ էի, գնացել էի Գավառ՝ ստուգումների, որը, ինչպես միշտ, ավարտվեց քեֆ-ուրախությամբ: Մի տարիքով մարդ պարում էր, և դա շրջադարձային էր ինձ համար՝ արվեստի ընկալման առումով: Մինչ այդ կարծում էի՝ պարը ձկուն շարժում է, վարպետություն, բայց այդ մարդն այնպես էր պարում, որ զգացի՝ պարը լոկ երաժշտության ընկալում է: Նույնը՝ գրականությունը: Շատ գրողներ տարվում են աճապարարությամբ, ծեծեծելում են բառաֆոնդով, իրենց ռեբուսագրությամբ, ոճավորումով: Դա երբեք էլ ճշմարիտ ճանապարհը չէ գրականության: Բսկական գրականությունը կյանքի զգացողությունն է, լեզուն լոկ միջոց է ասելիքը տեղ հասցնելու, իսկ շատերը «երթնեկության միջոցը» դարձնում են «լիմուզին», և ընթերցողը ոչ թե ասելիքն է տեսնում, այլ տյունինգ արած «լիմուզինը»: Կարևորը ասելիքը բանավոր խոսքի վճիտությունն ու պարզությունը հասցնելն է: Բանավոր խոսքում մարդիկ ճիշտ են արտահայտվում, թղթի առաջ կարկանդակ են: Ես կուզեմայի գրողն իր լեզուն բանավոր խոսքի կենդանությանն ու ճշգրտությանը հասցնել:

Չորսյց՝ Արմինե ՍԱՐԳՍՅԱՆԻ

ОЧЕРЕДНОЙ ВКЛАД «ТАШИРА» В РАЗВИТИЕ КАЛУЖСКОЙ ОБЛАСТИ



15 июня в деревне Лучкино Перемышльского района состоялось торжественное открытие нового животноводческого комплекса на территории ООО СП «Калужское». В церемонии приняли участие президент группы компаний «Ташир» Самвел Карапетян и калужский губернатор Анатолий Артамонов. С открытием комплекса в хозяйстве создано 110 рабочих мест, суммарный объем инвестиций в хозяйство равен 750 млн. рублей.

Соглашение о строительстве комплекса было подписано два года назад между группой компаний «Ташир» и Перемышльской районной администрацией. Новый животноводческий комплекс является действующим. В ноябре прошлого года сюда были завезены 1000 голов скота голштинской породы. Общая площадь комплекса составляет 20 гектаров. Проект предполагает создание технологической цепочки по выращиванию кормовых, зерновых культур и животных, а также первичной обработке молока и проведению селекционных работ по улучшению воспроизводства стада. В хозяйстве применяется прогрессивная технология круглогодичного стойлового боксового содержания коров. Подготовка кормов к скармливанию и их раздача осуществляется с помощью миксеров в виде полноценных сбалансированных смесей.

В ходе встречи глава региона Анатолий Артамонов еще раз выразил благодарность президенту группы компаний «Ташир» Самвелу Карапетяну за поддержку развития региона, выразив надежду, что «Ташир» и в будущем будет реализовывать новые бизнес-проекты на Калужской земле.

Выступая на церемонии, Анатолий Артамонов подчеркнул, что построенный на территории СП «Калужское» животноводческий комплекс

уже показал свою результативность благодаря новым прогрессивным технологиям. Он также отметил значимость активного внедрения в аграрную сферу современных инноваций как для повышения эффективности сельхозпроизводства и качества продукции, так и для процветания сельских территорий.

Зара Аджемян, глава департамента маркетинга и корпоративных коммуникаций группы компаний «Ташир»: «Калужская область много лет подряд является одним из наиболее привлекательных регионов для инвесторов и бизнеса в России, в том числе и поэтому группа компаний «Ташир» давно и успешно поддерживает лучшие инициативы по развитию области в различных секторах экономики. Невозможно переоценить важность развития сельскохозяйственного комплекса: реализация инвестиционных проектов позволяет обеспечить выпуск конкурентоспособной продукции, создание новых рабочих мест, повышение заработной платы работников, а также стабильные налоговые поступления в бюджет. В контакте с администрацией мы не первый год работаем над развитием инфраструктуры Калужской области и будем продолжать наше тесное сотрудничество и в дальнейшем».

ИНФОРМАЦИОННАЯ СПРАВКА

ООО «СП «Калужское» образовано в 2004 году на базе ГУП ОПХ «Калужское». В его пользовании находится 2880 га земли, из них 2550 га занято сельскохозяйственными угодьями, площадь пашни – 1932 га. Количество работающих на предприятии – 90 человек.

WWW.TASHIR.RU

«Горцарар»

Издается с июля 1999 г.

Автор проекта и учредитель –
Ваграм БЕКЧЯН

Зам. гл. редактора –
Роза ГУЛЯН

Գլխ. խմբագրի տեղակալ՝
Ռոզա ԴՈՒԼՅԱՆ

ИЗДАТЕЛЬ

Издательский Дом

«ШАГАНЭ»

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован
в Министерстве Российской Федерации
по делам печати, телерадиовещания
и средств массовых коммуникаций
Регистрационный номер
ПИ № 77-5015

Авторские материалы

не рецензируются и не возвращаются.
Переписку с читателями редакция
не ведет. Мнение авторов может
не совпадать с мнением редакции.

Материалы со знаком **Գ** публикуются
на правах рекламы.

Редакция не несет ответственности
за содержание рекламных объявлений.

ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов» г. Калуга, ул. Московская 256.

Формат А3, объем 4,0 п.л.

Тираж 1 500 экз. Зак. № 1326.

Территория распространения:
Российская Федерация, страны СНГ,
зарубежные страны.

В номере использованы материалы

«НОВЕ КОВЧЕ», «АЗГ», «АРАВОТ»,
«ГА», «ЕТЕР», «ԳԱՅԿԱԿԱՆ ԴՅԱՆԱԿ»,
«ԻՐԱՎԱՆԿ», «ՎՅՈՆԻ», «НОВОЕ ВРЕМЯ».

Цена свободная.

Адрес издательства и редакции:

**248001, г. Калуга,
ул. Суворова, 160.**

Тел.: (4842) 56-59-29, 59-17-73.

E-Mail: gortsarar@list.ru

факс (4842) 565-929,

www.gortsarar.ru



E-Mail: gortsarar@list.ru